

## ԹՈՎՄԱՍ ՆԱԶԱՐԲԵԿՅԱՆԻ ԱՆՏԻՊ ՀՈՒՇԵՐԸ

Ռազմական գործողությունները Կովկասյան ճակատում  
1914 թ. հուլիսից մինչև 1916 թ. ապրիլի 26-ը  
Տետր 4. 1915 թ. հուլիսի 10-ից մինչև օգոստոսի 14-ը\*

**Բանալի բառեր** - Մուշ, Մանազկերտ, Անդրանիկ, Դրո, Ն. Յուդենիչ, Վանա լիճ, Արճեշ, Կոփ, Պ. Օզանուկյի, Ն. Աբաջին, Դ. Բարաթով, Մ. Սիլիկյան:

### Ռուսական բանակի 1915 թ. հուլիսյան տարօրինակ նահանջը տարբեր կերպ է գնահատվել ռուս և հայ ռազմական պատմաբանների կողմից:

Կովկասյան բանակի թիկունքի պետ, հետագայում ռազմական պատմաբան գեներալ **Ե. Մասլովսկու**<sup>1</sup> կարծիքով՝ 4-րդ բանակային կորպուսի հրամանատարությունը հետախուզության համար անհրաժեշտ չափով չօգտագործեց հեծելազորը, ինչի պատճառով չկարողացավ պարզել, թե հակառակորդի բանակում ինչ է կատարվում՝ չենթադրելով, որ թուրքերը կարող են զգալի ուժեր կենտրոնացնել և նախապատրաստվել հարձակման<sup>2</sup>:

Մի շարք ռազմական պատմաբաններ, ինչպես, օրինակ՝ նույն **Ե. Մասլովսկին**<sup>3</sup>, և խորհրդահայ ռազմական պատմաբան **Ա. Հարությունյանը**<sup>4</sup> գտնում են, որ գեներալներ Գ. Շարպանտիեի և Թ. Նազարբեկյանի 1915 թ. հուլիսի սկզբների

\* Ընդունվել է տպագրության 20.11. 2019:

1 **Մասլովսկի Եվգենի Վասիլի** (1876-1971) ռուս գեներալ, ավարտել է Նիկոլայևյան զինավոր շտաբի ակադեմիան (1906): Առաջին աշխարհամարտի տարիներին Կովկասյան բանակի թիկունքի բաժանմունքի պետն էր, որի պարտականությունների մեջ էր մտնում նաև հետախուզական ծառայությունը: Նրա զեկուցագիրը վճռական նշանակություն ունեցավ Էրզրումի (Կարին) օպերացիայի իրականացման համար: Ունի անտիպ հուշեր, որոնք պահպանվում են ԱՄՆ-ի Կոլումբիայի համալսարանի արխիվում: Հեղինակել է «Мировая война на Кавказском фронте 1914-1917 г.» (Париж, 1933) աշխատությունը:

2 Տե՛ս **Масловский Е. В.**, Мировая война на Кавказском фронте 1914-1917 г., Париж, 1933, էջ 191:

3 Գեներալը չգիտես ինչու հարկ է համարում նշել, որ Թ. Նազարբեկյանը, լինելով շրջափայց ու հանգիստ, սակայն չափազանց զգուշավոր, ողջ պատերազմի ընթացքում վճռական պահերին ակտիվություն չի ցուցաբերել (տե՛ս **Масловский Е. В.**, նշվ. աշխ., էջ 400-ի ծանոթագրությունը): Ե. Մասլովսկու այս գնահատականը տարածում գտավ, և մի շարք հեղինակներ պարտադիր են համարում այն վկայակոչել իրենց գործերում: Այսպես ռուս հեղինակ Կ. Չալեսկին իր կազմած տեղեկատու հանրագիտարանում հարկ է համարել նշել, որ 1915 թ. հուլիսի 9-ի թուրքական հարձակումից հետո գեներալը որևէ նախաձեռնություն հանդես չի բերել, որի հետևանքով օսմանյան խմբավորումը չի ջախջախվել: Տե՛ս **Залесский К. А.**, Первая мировая война. Биографический словарь, Москва, 2000, էջ 160:

4 **Հարությունյան Աշոտ Հովսեփի** (1911-1986) խորհրդահայ ռազմական պատմաբան, գնդապետ, 2-րդ աշխարհամարտի մասնակից: Գիտական ուսումնասիրությունները հիմնականում վերաբերել են XX դարի առաջին տասնամյակների ռազմական պատմությանը, ինչպես նաև երկու աշխարհամարտերում հայերի մասնակցությանը: Տե՛ս **Арутюнян А. О.**, Кавказский фронт 1914-1917 гг., Ереван, 1971, էջ 181-182:

անվճռական գործողությունների շնորհիվ է թշնամին հնարավորություն ստացել ճեղքելու ռազմաճակատը:

Ինչպես տեսանք մեր նախորդ հրապարակման մեջ, **Թ. Նազարբեկյանն** իր հուշերում ամենայն մանրամասնությամբ նկարագրել է ստեղծված իրավիճակը՝ հրդեհվող գյուղերի կրակներով պատված Մշո դաշտից թուրքական ուժերի առաջխաղացման մասին Լաբինսկյան կազակային գնդի հրամանատարի ուղարկած կեղծ տեղեկությունը, զինվորների հոգնածությունը, պարենի պակասը<sup>5</sup>, իրարամերժ հրամանները և այլն: Գեներալը հերքում է այն տարածված տեսակետը, թե իբր Մանավկերտի ուղղությամբ Կովկասյան 4-րդ բանակային կորպուսի դեմ թշնամին կենտրոնացրել էր 11 դիվիզիա: Թ. Նազարբեկյանի կարծիքով թշնամին իրականում այդտեղ կենտրոնացրել էր 4 դիվիզիա:

Սակայն, ինչպես պարզվում է գեներալ **Ն. Կորսունի**<sup>6</sup> ուսումնասիրությունից, Կովկասյան բանակի հրամանատարությունն իրականում որոշել էր ստեղծված իրավիճակն օգտագործել հարձակվող թուրքական զորքերին ծուղակի մեջ գցելու համար, ուստի դիտավորյալ չօժանդակեց 4-րդ բանակային կորպուսին, օգնական ուժեր չուղարկեց, որպեսզի նահանջելով դրդի հակառակորդի հարվածային զորախմբին էլ ավելի խորանալ, որի հետևանքով այն հարվածի տակ կոներ իր ծախ թևը և թիկունքը: Այդ նպատակով բոլորից գաղտնի նախապատրաստվեց գեներալ Ն. Բարաթովի հեծելազորի հարձակումը, որի իրագործումը հնարավորություն կտար շրջապատելու թուրքերին Ալաշկերտի հովտում<sup>7</sup>: Սակայն թուրքական հրամանատարությունը զգուշանալով չցանկացավ խորանալ հակառակորդի տարածքում, քանի որ նրա համար կասկածելի էր ռուսական զորքերի նման հապճեպ նահանջը<sup>8</sup>: Հարկ ենք համարում նշել, որ թեև հակառակորդի ջախջախման այս ծրագիրն ունեցավ որոշակի հաջողություն, բայց և այնպես հայ բնակչությունը մարդկային ու նյութական ահռելի կորուստներ կրեց:

Նշենք, որ այդ ամենի արդյունքում Կովկասի փոխարքա և բանակի գլխավոր հրամանատար Ի. Վորոնցով-Դաշկովի կողմից հետաքննություն սկսվեց, որն իր ավարտին չհասցվեց, քանի որ շուտով նրան փոխարինեց կայսրի հորեղբայր Նիկոլայ Ռոմանովը: Միայն գեներալ Պ. Օգանովսկին հեռացվեց իր զբաղեցրած պաշտոնից և ուղարկվեց ռուս-ավստրիական ռազմաճակատ, ինչը թերևս քավության նոխազ փնտրելու փորձ էր: Մեր կարծիքով՝ ռազմական պատմաբաններ-

5 Հետագայում փոխարքա Ի. Ի. Վորոնցով-Դաշկովը Կովկասյան 4-րդ բանակային կորպուսի հրամանատարին մեղադրեց նրանում, որ Մանավկերտում կուտակված պարենի մեծ պաշարները չօգտագործվեցին կիսատված և անընդհատ առաջացող զորքերին ուտելիքով ապահովելու համար: Տե՛ս Կորսուն Կ. Գ., Алашкертекая и Хамаданская операции на Кавказском фронте мировой войны в 1915 году, Москва, 1940, էջ 121:

6 **Կորսուն Նիկոլայ Օեորգիի** (1876-1958) ռուս և խորհրդային զորավար, ռազմական պատմաբան, գեներալ-լեյտենանտ, ռազմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Ղասափանդել է Մ. Ֆրուզեի անվան ռազմական ակադեմիայում, այդ թվում Արևելյան (Հատուկ) ֆակուլտետում, որտեղ պատրաստում էին ռազմական հետախույզներ:

7 Տե՛ս Կորսուն Կ. Գ., նշվ. աշխ., էջ 116:

8 Տե՛ս Масловский Ե. В., նշվ. աշխ., էջ 181:

րը, խորանալով մանրամասների մեջ, իրականում անտեսում կամ միտումնավոր քողարկում են ռուսական բանակի 1915 թ. հուլիսյան տարօրինակ նահանջի իրական պատճառները:

**Իրականությունն այն է,** որ Ռուսաստանի բարձրագույն իշխանությունների և անձամբ կայսր Նիկոլայ II-ի մոտ մեծ դժգոհություն էին առաջացրել Կովկասյան բանակի 1915 թ. գարնանային հաջողությունները: Ռուսական բանակի 1915 թ. հուլիսյան տարօրինակ նահանջը պայմանավորված էր ոչ թե ռազմական, այլ քաղաքական դրդապատճառներով: Առաջին հայացքից սա տարօրինակ է թվում, սակայն մեծապետական շովինիզմով տարված ցարական գործիչները «մտահոգված» էին, որ Արևմտյան Հայաստանի արագ գրավումը օսմանահպատակ հայերին հնարավորություն կտա ունենալու սեփական ինքնավարությունը, իսկ ապագայում մեկ պետության մեջ միավորելու «ռուսական» և «թուրքական» Հայաստանները<sup>9</sup>: Դա էր հիմնական պատճառը, որ նրանք նույնիսկ թշնամաբար էին վերաբերվում կամավորական խմբերին և լուրջ քայլեր էին ձեռնարկում հայկական փոքրաթիվ զինուժը վերացնելու համար: Այդ կապակցությամբ Թ. Նազարբեկյանն իր հուշերում հիշատակում է Անդրանիկին առնչվող միջադեպը, երբ նշանավոր հայդուկապետը ցանկանում էր հրաժարվել 1-ին խմբի հրամանատարությունից ու ցրել դրուժինան: Անդրանիկը համոզված էր, որ Վանի հուլիսյան նահանջը կատարվել է միտումնավոր: Նա պարզորոշ ասում էր. «Այս նահանջը կատարեալ կեղծիք մըն է, դուք (ռուսական իշխանությունները - Ռ. Ս.) կ'ուզեք Հայաստանը առանց Հայերու մնայ, ահա ձեր մտապատկերը»<sup>10</sup>:

Ինչպես իրավացիորեն արձանագրում է պատմաբան Հր. Սիմոնյանը. «Մինչդեռ Վասպուրականում, Խնուսի, Բուլանխի և Մանազկետի շրջաններում երկու թշնամի բանակները բախվում և հետուառաջ խաղանցումներ էին կատարում, մնացյալ հայաբնակ շրջաններում սկսած էրզրումից մինչև Սվազ, Տրապիզոնից մինչև Խարբերդ, Բիթլիս, Դիարբեքի շարունակվում էին զանգվածային տեղահանություններն ու ահավոր կոտորածները»<sup>11</sup>:

Ինքը՝ գեներալ Թ. Նազարբեկյանը, ի տարբերություն ռուս ռազմական պատմաբանների և մի շարք խորհրդահայ հեղինակների, դեռևս 1920-ականներին շարադրված իր հուշերում ճշմարտությունը գրելու ազնվություն է ունեցել, և հենց դրանում է նրա հուշերի կարևոր արժեքը: Մասնավորապես նա համոզմունք է հայտնում, որ 1915 թ. հուլիսին Վանին որևէ վտանգ չէր սպառնում: Ուստի գեներալ Ա. Նիկոլակի՝ ոչնչով չհիմնավորված, հապշտապ փախուստը խուճա-

9 Տե՛ս **Бахтурин А. Ю.**, Окраины российской империи. Государственное управление и национальная политика в годы Первой мировой войны (1914-1917 гг.), Москва, 2004, էջ 217-218:

10 **Զորավար Անդրանիկի** կովկասեան ճակատի պատմական օրագրութիւնը 1914-1917: Օրագրուած գորավարին թիկնապահ զինուորէն, Եր., 2000, էջ 35:

11 **Սիմոնյան Հ. Ռ.**, Անդրանիկի ժամանակը. երկու գրքով, գիրք Ա, Եր., 1996, էջ 473:

պի մատնեց նահանգի և քաղաքի հայությանը, որի հետևանքով բնակչությունը կրեց մարդկային ու նյութական ահռելի կորուստներ: Թ. Նազարբեկյանը, ի տարբերություն Ա. Նիկոլյանի, չնահանջեց, այլ մնաց այնքան ժամանակ, մինչև տեղ հասան իր բրիգադի զորամասերը, որոնց թվում հայկական 1-ին և 2-րդ դրուժինաները: Բայց դրանցից միայն Դրոյի գլխավորած 2-րդ դրուժինան ի վիճակի եղավ դիմակայելու հակառակորդին և ապահովելու արդեն լուրջ կորուստներ կրած վասպուրականցիների նահանջը<sup>12</sup>:

Գեներալ Թովմաս Նազարբեկյանի հուշերի հայերեն թարգմանությունը տպագրվում է առաջին անգամ, առանց կրճատումների: Մեր միջամտությունները ներկայացվում են ուղղագիծ փակագծերում: Բնագիրը պահպանվում է Հայաստանի ազգային արխիվում:

## Տետր 4 22 փետրվարի 1929 թ. Թիֆլիս

[1915 թ.] հուլիսի 10-ի առավոտյան ժամանեց Կովկասյան 5-րդ գնդի գումարտակը, որը գ. Թափավանքից ուղարկվել էր գ. Մեծք՝ իբրև առաջակալ զորամաս և Նազիկի լեռնանցքում իմ թիկունքի պահպանության համար թողնված պլաստունյան 20-րդ գումարտակի հետ կապ, երբ ես առաջանում էի դեպի Մուշ: Գումարտակի հրամանատարն ինձ զեկուցեց, որ որևէ հակառակորդի այնտեղ չի հայտնաբերել, և որ 20-րդ գումարտակը Նազիկի լեռնանցքում չէ: Վաղ առավոտյան պաշտպանության համար դիրք ընտրեցի, որը գտնվում էր Փուրխուս գյուղից հարավ 6907 բարձունքի վրա: Աջ տեղամասը զբաղեցնում էր Կովկ. 5-րդ հրաձգ. գնդի 2-րդ գումարտակը, իսկ ձախը՝ 3-րդը: Հրետանին տեղակայվեց դրանց միջև, մնացած զորամասերը թողնվեցին պահեստազորում:

Թորթոնի կողմից լսվում էին հրետանային ու հրացանային կրակոցներ: Պարզելու համար, թե այնտեղ ինչ է կատարվում, Քերս<sup>13</sup> գյուղի (գտնվում է Նազիկ գյուղ<sup>14</sup> լճի հյուսիսային ափին) ուղղությամբ ուղարկեցի իմ ջոկատում գտնվող Կովկ. 6-րդ հրաձգ. գնդի գումարտակը, իսկ հեծելազորը՝ Լաբինսկյան կազակային գունդը, ես ուղարկեցի հակառակորդի կողմը՝ հետախուզելու հարավային ու արևմտյան ուղղությունները:

Մեր հեծելազորը երկար ժամանակ չէր կարողանում հայտնաբերել հակառակորդին: Քերս գյուղ ուղարկված Կովկ. 6-րդ հրաձգ. գնդից նույնպես ես տեղեկություն չունեի, սակայն հրետանային ու հրացանային կրակոցների ձայնից կարելի էր ենթադրել, որ Թորթոն գյուղի մոտ կռիվը թեժանում է: Անհանգստանալով իմ աջ թևի և թիկունքի համար՝ ես վճռեցի այնտեղ ուղարկել նաև Կովկ. 5-րդ հրաձգ. գնդի 1-ին գումարտակը:

<sup>12</sup> Դրոյի այս սխրագործության մասին տե՛ս **Չևորգյան Հ.**, Դրո, Եր., հեղ. հրատ., 2014, էջ 170-175:

<sup>13</sup> **Կերս**, Կիրս, Հիրս:

<sup>14</sup> Թուրք. լիճ:

Հուլիսի 10-ին՝ երեկոյան ժամը 4 անց 30-ին, Կովկ. 4-րդ բանակային կորպուսի հրամանատարից ստացա հետևյալ հեռախոսագիրը. «Առանց հերթի, N 49, Մանազկերտից Փուրխուս: Հակառակորդը Լիզից հարձակվում է Կարաբաշարի, Օդինչարից Կովի և Խանիկի կողմից Մանազկերտի վրա: Քանի որ որոշել եմ Մանազկերտում կենտրոնացնել ուժերը՝ հակառակորդին ջախջախելու համար, ուստի հրամայում եմ Ձեզ երկու գումարտակներով, երկու թնդանոթներով շարժվել Մանազկերտ՝ իմ գտնվելու վայրը, իսկ մնացած ուժերով հսկել Փուրխուս-Կարմունջը և կապ պահպանել գեներալ Տրուխինի հետ, որին հրամայված է շարժվել դեպի Մուշ և ապահովել Ձեր թևը: Բուրցովի պլաստունների գումարտակին հրամայված է Փիրան քյոյից շարժվել Քերս՝ Ձեզ միանալու համար: Ախլաթում բացվել է հեռագրակայան: Այնտեղ հեռախոսակապ անցկացրեք: 44: Գեներալ Օգանովսկի»:

Երկար մտորեցի այդ հեռախոսագրի [բովանդակության] մասին: Ինձ զարմացրեց կարգադրությունը՝ երկու գումարտակներով շարժվել, իսկ առավել ուժեղ և կարևոր ջոկատը թողնել ուրիշի հրամանատարության տակ: Այդ օրը գեներալ Մուդրին հիվանդ լինելու մասին զեկուցագիր էր գրել: Ջոկատը ստիպված էի թողնել Կովկ. 5-րդ հրաձգ. գնդի հրամանատար, գնդապետ Դոկուչանին, որն այնքան էլ եռանդուն մարդ չէր մարտական գործողությունների ժամանակ: Բացի այդ՝ ինձ ապշեցրեց կորպուսի հրամանատարի պահանջը՝ կապ պահպանել գեներալ Տրուխինի հետ: Տրուխինն ինձից շուրջ 50 վերստի վրա էր գտնվում, և, բացի այդ, ինչպե՞ս կարող էր Տրուխինն իր փոքրիկ ջոկատով շարժվել դեպի Մուշ՝ իր ձախ թևում ունենալով Բիթլիսը, բացի այդ՝ շրջակա բոլոր լեռների վրա հավաքվել էին մեր նկատմամբ թշնամաբար տրամադրված մեծաթիվ զինված քրդեր՝ հայերի երդվյալ թշնամի Մուսա բեկի գլխավորությամբ: Ըստ երևույթին, կորպուսի հրամանատարը բացարձակապես չի կշռադատել իր անիրագործելի կարգադրությունը<sup>15</sup>:

Գեներալ Շարպանտիեի ջոկատի մասին որևէ հիշատակություն չկար, չնայած որ նա ամենից մոտ էր գտնվում: Այդ հեռախոսագրից ես վերջապես տեղեկացա պլաստունյան 20-րդ գումարտակի ճակատագրի համար, որի մասին ես այնքան շատ էի անհանգստանում, որ նույնիսկ նրա հետ կապի և օգնության համար իմ փոքրիկ ջոկատից ուղարկել էին երկու գումարտակ: Ինձ ապշեցրեց այն հանգամանքը, որ ռազմական ավագ Բուրցովը, նահանջելով Նազիկի լեռնանցքից դեպի Փիրան քյոյ<sup>16</sup>, հարկ չհամարեց ինձ զեկուցել հեռախոսով, որով նա կապ էր պահպանում ինձ հետ: Նա, իհարկե, համաձայն կորպուսի հրամանատարի կարգադրության, իր գումարտակով ինձ չէր միացել և արդեն չէր էլ կարող միանալ, քանի որ իրավիճակը շատ արագ էր փոխվում:

Ինչևէ, հեռախոսագրի համաձայն, հուլիսի 11-ին՝ առավոտյան, ես անձամբ 2 գումարտակներով (Կովկ. 5-րդ հրաձգ. գնդի 1 գումարտակ, մյուսը՝ պլաստունների) և Կովկ. 2-րդ հրաձգ. դիվիզիոնի 2 լեռնային թնդանոթներով շարժվեցի դեպի Խուլիկ գյուղը և ապա՝ Խանիկ գյուղը, իսկ Փուրխուսի ջոկատը թողեցի գնդապետ Դոկուչանի հրամանատարության տակ:

<sup>15</sup> Այս փաստն արձանագրել է նաև գեներալ Ն. Կորսունը: Նրա կարծիքով՝ Թ. Նազարբեկյանի ջոկատը կորպուսի հրամանատարի հրամանի հետևանքով մասնատվեց: Տե՛ս Корсун Н. Г., նշվ. աշխ., էջ 95:  
<sup>16</sup> Թուրք.՝ գյուղ:

Խուլիկ գյուղում ջոկատին հանգիստ տվեցի: Այդ գյուղում էին գտնվում Կովկ. 5-րդ հրաձգ. գնդի և այլ զորամասերի գումակները: Տազնապալի ոչինչ չէր նկատվում: Երբ ես գումարտակներով հասա Խանիկ գյուղը, որտեղ տեղակայված էին Նիժեգորոդյան և Սևերսկյան գնդերի գումակները, Մանազկերտ՝ կորպուսի հրամանատարին, հեռախոսագիր ուղարկեցի իմ ժամանման մասին: Որոշ ժամանակ անց ստացա հետևյալ պատասխանը. «Գեներալ Նազարբեկովին: Խանիկ, ի պատասխան 1915 թ. հուլիսի 11-ի առավոտյան ժամը 9 անց 50 րոպե, № 51: Մանազկերտից՝ 5 վերստ դուրս հեռավորությամբ<sup>17</sup>: Դուք ճիշտ չեք հասկացել № 49 հրամանը: Դուք անձամբ պետք է մնայիք ջոկատի հետ և պլաստունների երկու գումարտակով միանայիք գեներալ Մուդրիի ընդհանուր պահեստազորին: Վայրը նշելու համար հանձնակատար սպային ուղարկեք Մանազկերտից երկու վերստի վրա գտնվող Կարա Ալի ճանապարհին գտնվող իմ դիտակետը: Գեներալ Օգանովսկի»:

Այդ հեռախոսագրին ես անմիջապես պատասխանեցի, որ հանգստից հետո Կովկ. 5-րդ հրաձգ. գնդի հրամանատար<sup>18</sup>, փոխգնդապետ Իվանովի հրամանատարությամբ գումարտակները կուղարկեմ նշված վայրը, իսկ ինքս հաջորդ օրը կվերադառնամ Փուրխուս:

Ինձ շտաբի հետ զինվորական ճաշի հրավիրեց Նիժեգորոդյան դրագունյան գնդի գումակի պետ, ռոտմիստր<sup>19</sup> Նախիջևանսկին, իսկ մարդկանց [զինվորներին] կերակրեցին տաք ճաշով: Ճաշից հետո գումարտակները շարունակեցին երթը, իսկ ես նույնպես իմ շտաբի պետի առաջարկությամբ նրանց հետ գնացի, որպեսզի գիշերեմ Մանազկերտից Աղվերան գյուղ տանող ճանապարհին գտնվող լազարեթում: Հասնելով այդ գյուղը՝ ես իմ շտաբի հետ մնացի այնտեղ, իսկ գումարտակները շարունակեցին իրենց երթը դեպի Մանազկերտ: Ստուգեցի բրիգադի լազարեթը<sup>20</sup>: Վիրավորները շատ էին, և նրանց մեջ կային նաև ծանր վիրավորներ: Շրջագայությունից հետո լազարեթի բժիշկներն ու աշխատակիցները մեզ հրավիրեցին թեյի: Մնացինք մինչև գիշերվա ժամը 10-ը: Կոփի կողմից լսվում էին հրետանային և հրացանային կրակոցներ: Ձայներից երևում էր, որ այդ շրջանում բավականին լուրջ մարտեր են ընթանում: Բրիգադի բժշկին ուղղված իմ այն հարցին՝ «Կորպուսի բժշկից<sup>21</sup> ի՞նչ կարգադրություններ եք ստացել», նա պատասխանեց, որ կորպուսի բժիշկը հրամայել է տեղում մնալ մինչև իր կարգադրությունը:

Ես գիշերեցի գետակի ափին՝ իմ ճամփորդական վրանում: Ես վատառողջ էի և ահա գիշերը լսեցի միմյանց հանդիպած երկու հանձնակատարների խոսակցությունն այն մասին, որ թուրքերը զգալի համալրում են ստացել և ստիպել մերոնց նահանջել դեպի Մանազկերտ: Տեսնելով, որ կորպուսի բժշկից բրիգադի լազարեթի վերաբերյալ որևէ կարգադրություն չկա, ես սկսեցի անհանգստանալ նրա ճակատագրի համար: Այդ ժամանակ ես ինձ մոտ կանչեցի բրիգադի բժշկին՝ բժիշկ Յվետաձեին և հրամայեցի արշալույսին լազարեթը պատրաստել [տեղափոխման] և շարժվել Մանազկերտ՝ չսպասելով կորպուսի

17 1 դուրսը հավասար է 2,54 սմ-ի:

18 Կովկասյան 5-րդ հրաձգային գնդի հրամանատարը Դոկուչան էր, որը պաշտոնավարել է մինչև 1916 թ. ապրիլի 2-ը:

19 Հեծելազորի սպայական կոչում, որը հավասարազոր է հետևակի կապիտանի կոչմանը:

20 Ձինվորական հիվանդանոց բուժման համար

21 Պաշտոնատար անձ, որը ղեկավարում է բանակային կորպուսի բժշկական ծառայությունը:

բժշկի կարգադրությանը: Այն վիրավորները, որոնք կարող են քայլել, թող [նստքով] գնան, իսկ ծանր վիրավորներին տանել սայլերով ու պատգարակներով:

Այս կարգադրությունից որոշ ժամանակ անց ես գնացի Խանիկ, որպեսզի շարժվեն դեպի Փուրխուս: Հետագայում պարզվեց, որ իմ կարգադրությունը փրկեց բրիգադի լազարեթը: Կորպուսի բժիշկ Շենդերովսկին այն խառնաշփոթի մեջ, որ տիրում էր Մանազկերտում կորպուսի շտաբում, բացարձակապես մոռացել էր կարգադրել նահանջել բրիգադի լազարեթը: Լազարեթի վերջնամասին հակառակորդն արդեն հասնում էր և միայն լազարեթի հայ ֆելդֆեբելի<sup>22</sup> կողմից ձևավորված վերջապահի համառ պաշտպանությունը, թույլ տվեց լազարեթին բարեհաջող ազատվել, իսկ վերջապահը շրջապատվեց և ֆելդֆեբելի գլխավորությամբ գերեվարվեց:

Գալով Խանիկ ես ապշեցի այն դատարկությունից, որ գտա այնտեղ: Հետքն անգամ չկար այն գունակների և զորամասերի, որոնց ես տեսել էի նախօրյակին: Դա ինձ խիստ զարմացրեց: Ոչ մի կերպ չէի կարողանում հասկանալ, թե ինչու է այդ ամենը տեղի ունեցել: Ես ցանկանում էի շարունակել ճանապարհը դեպի Խուլիկ, ապա՝ Փուրխուս, սակայն շրջապատի դատարկությունը և լռությունը տազնապի մեջ էին գցել [նաև] իմ շտաբի պետին: Նա չգիտես ինչու իր կասկածները [հայտնելու համար] ինձ չմոտեցավ, այլ ուղարկեց իմ շտաբին կից գտնվող հարյուրյակի պետին: Նա առաջարկեց առայժմ մնալ Խանիկում, իսկ ինքը հեծելապարեկներ կուղարկի և անձամբ նրանց հետ կգնա դեպի Խուլիկ, ուր մենք պետք է ուղևորվեինք: Ես համաձայնեցի և իմ շտաբի պետի հետ նստեցինք Ախլաթից դեպի Խանիկ ու Մանազկերտ տանող ճանապարհի մոտ:

Մոտ մեկ ժամ անց ես հարյուրյակի հրամանատարից գեկուցում ստացա, որ Խուլիկից դեպի Խանիկ հարձակվում են թուրքական 6 թաբուրներ: Այդ նույն ժամանակ ես և իմ շտաբի պետը նկատեցինք Ախլաթի ճանապարհի կողմից Խանիկ ուղևորվող հեծյալների մեծ խումբ: Պարզվեց, որ դա գեներալ Շարպանտիեն է իր բրիգադայինի<sup>23</sup>, շտաբի և իր դիվիզիայի Նիժեգորոդյան և Սևերսկյան գնդերի հետ: Երբ գեն. Շարպանտիեն մոտեցավ ինձ, ես մոտեցա նրան ու ներկայացա: Նա ինձ զարմացած հարցրեց, թե ինչո՞ւ եմ ես այստեղ, այլ ոչ թե Մանազկերտում, քանի որ երկու օր առաջ կորպուսի հրամանատարի հրամանով ես նշանակվել էի Մանազկերտի ջոկատի պետ, իսկ ինքը՝ Լաթերում գտնվող առաջապահ զորամասերի պետ, որտեղ և ուղևորվում է իր դրագուններով: Դրան ես պատասխանեցի, որ նման հրաման չեմ ստացել, իսկ Լաթերը գրավվել է հակառակորդի կողմից: Նա, ցանկանալով անձամբ հավաստիանալ, իր դրագունների հետ առաջ շարժվեց: Ես իմ շտաբի ու հարյուրյակի հետ հետևեցի նրան: Նա առաջ ուղարկեց ուժեղացված հեծելապարեկներ, և երբ նրանք սկսեցին Խանիկից իջնել դեպի Աղվերան գյուղը, ուղարկված հեծելապարեկները գնդակոծվեցին թուրքերի կողմից:

Անձամբ համոզվելով, որ իրեն հանձնարարված շրջանը գրավված է թուրքերի կողմից, իր ջոկատով շրջվեց դեպի Խանիկ, որից հետո շարունակեց ճանապարհը դեպի Ադիջևազ: Մեր երթի ժամանակ մենք պարզ տեսնում էինք թուրքերի հարձակումը և մեր

22 Ֆելդֆեբել՝ կրտսեր սպայական կոչում ռուսական բանակում: Համապատասխանում է ներկայիս ենթասպայի կոչմանը:

23 Բրիգադի հրամանատար:

գորքերի նահանջը դեպի Մանագկերտ: Թուրքերը ձգտում էին ճակատային հարձակումը զուգակցելու երկու թևերի, հատկապես՝ մեր ձախ թևի շրջառմամբ: Հավանաբար նրանք ցանկանում էին մեր գորքերին մի կողմ նետել նահանջի ճանապարհից: Թուրքական հարձակումը տեսնելով՝ ես առաջարկեցի գեներալ Շարպանտիեին իր հեծելազորով հարվածել թուրքերի թևին և նույնիսկ որոշ չափով թիկունքին, սակայն նա առաջարկությանը չպատասխանեց (միայն նայեց ինձ վրա) և շարունակեց ճանապարհը դեպի Ադիջևազ:

Դրագունյան գնդերի ձիերը խիստ հոգնած էին և ուժասպառ, որի գլխավոր պատճառը կերի, հատկապես գարու անկանոն մատակարարումն էր: Նրանք դժվարությամբ էին առաջանում շքեղ լեռնային բուսականության միջով, որը հասնում էր մինչև ձիերի փորերը: Նույնիսկ այդ խոտը նրանց չէր գայթակղում: Նրանք այն ուտում էին ժամանակ առ ժամանակ պոկելով: Ինձ համար ցավալի էր տեսնել, թե ինչպես էին դրագունները գնդակահարում իրենց ձիերին, որոնք չէին կարողանում առաջ շարժվել: Զարմանալի էր այն, որ մեծ մասամբ ստիպված էին գնդակահարել ազնվացեղ ձիերին, որոնք դրագունները ձեռք էին բերել Արևմտյան ճակատում մարտական գործողությունների ընթացքում: Նրանք թույլ գտնվեցին բացարձակ թերսնման և մեծ լեռներ հաղթահարելու իրավիճակում: Նույն երկույթը ես նկատել էի Մանջուրիայում<sup>24</sup>: Նման պայմաններում տեղական ձիերն ավելի դիմացկուն էին:

Երեկոյան մոտենալով Ադիջևազին՝ ես դիմեցի գեներալ Շարպանտիեին հետևյալ հարցով՝ որպես կոչումով ավագ՝ նա չի՞ գլխավորի ջոկատը, որին նա պատասխանեց. «Դուք դա շա՛տ եք ուզում»<sup>25</sup>: Ես նրան պատասխանեցի, թե պետք է իմանալ. եթե նա չգլխավորի, ապա ես եմ ստիպված գլխավորել ու կարգադրություններ անել: Նա ինձ ոչինչ չպատասխանեց ու շարունակեց իր դրագունների հետ առաջանալ՝ անցնելով Ադիջևազը և ուղղվելով դեպի Նորչեն գյուղը:

Ադիջևազում էին Փուրխուսից նահանջած մեր գորքերը: Ադիջևազ հասնելով՝ ես գլխավորեցի ջոկատը՝ Կովկ. 5-րդ հրաձգ. գնդի 2 գումարտակ, պլաստունյան երկու գումարտակներ, մեկ լեռնային մարտկոց և Լաբինսկյան կազակ. գունդը:

Հնարավոր մարտի համար ընտրելով դիրքեր և նշելով պահակային հսկողության վայրերը՝ ուղարկեցի դրա համար նախատեսված զորամասերը: Կովկասյան 5-րդ հրաձգային գնդի հրամանատար, գնդապետ Դոկուչանը ինձ զեկուցեց, թե ինչ է տեղի ունեցել Փուրխուսում իմ հեռանալուց հետո: Հուլիսի 11-ի առավոտյան՝ մոտավորապես ժամը 10-ին, թուրքերը հարձակվեցին Փուրխուսի վրա: Սկսվեց հրացանային ու թնդանոթային հրաձգություն: Նախ և առաջ թուրքերն առաջ մղեցին փոքրիկ ջոկատ, որը կազմված էր 2 գումարտակներից ու 2 թնդանոթներից: Շղթայում գտնվող մեր երկու վաշտերը և հետախույզների ստորաբաժանումը լավ դիմագրավում էին, և ոչ ոք չէր մտածում նահանջելու մասին: Որոշ ժամանակ անց ստացվեց զեկույց, որ թուրքերին են մոտենում ևս 6 գումարտակ: Մենք մոտակա պահեստազորում ունեինք մեկ վաշտ, իսկ մյուս վաշտը պաշտպանում էր հրետանին, և խորքային պահեստազորում կար պլաստունների երկու գումարտակ:

24 Նկատի ունի 1904-1905 թթ. ռուս-ճապոնական պատերազմը:

25 Գ. Շարպանտիեի նման վերաբերմունքը հետաքրքրական էր, քանի որ հստակ երևում էր, որ նա աշխատում էր ամեն կերպ խուսափել որևէ պատասխանատվությունից: Միայն հուլիսի 13-ին, համաձայն կորպուսի հրամանատարության հրամանի, Գ. Շարպանտիեի ստանձնում է գեներալներ Թ. Նազարբեկյանի ու Ի. Տրովսիի՝ ջոկատների հրամանատարությունը: Տե՛ս Кореуи Н. Г., Գլ. աշխ., էջ 102, № 2-րդ ծանոթագրությունը:



Մոտավորապես երեկոյան ժամը 4-ին զեկուցագիր ստացվեց դեռևս հուլիսի 10-ին Քերս գյուղի ուղղությամբ Փուրխուսի ջոկատից ուղարկված և Փուրխուսի ջոկատի աջ թևի ու թիկունքի պաշտպանությունն ապահովող գնդապետ Մակակից<sup>26</sup>, որ հակառակորդը մեծ ուժերով անցել է հարձակման, այդ պատճառով ինքը ստիպված է նահանջել դեպի Խուլիկ գյուղը: Հետագայում նրանից այլևս որևէ զեկուցագիր չստացվեց: Կարելի էր ենթադրել (ինչը շուտով հաստատվեց), որ նա շարունակում էր նահանջել, իսկ թուրքերը հետևում էին նրան, որի հետևանքով հակառակորդը հայտնվեց մեր թևում և նույնիսկ թիկունքում:

Բացի այդ, զգալի համալրում ստանալով, թուրքերը սկսեցին ավելի մեծ թափով գործել և ձգտում էին շրջառելու մեր ձախ թևը, որպեսզի կտրեն մեր նահանջի ճանապարհը: Այդպես նահանջելու մտադրություն չունեցող մեր ջոկատի վիճակը ծանրացավ: Ուստի հրամայվեց անմիջապես նահանջել, որը կատարվեց կարգուկանոնով: Հրետանին մի քանի անգամ կանգ առավ ու կրակ բացեց հարձակվող հակառակորդի վրա, որն այնքան էլ եռանդուն չէր հետապնդում: Մեր ջոկատը նահանջում էր դեպի Ախլաթ քաղաքը: Ուղեցույցները տեղանքին ծանոթ լաբինսկցիներն էին: Գիշերը ժամը 2-ին ջոկատը ժամանեց Ախլաթ, որտեղ էլ գիշերեցինք, իսկ հուլիսի 12-ի առավոտյան շարժվեցինք դեպի Ադիջլազ:

Ադիջլազում ես կանգ առա իմ ջոկատի հետ՝ սպասելով Վանա լճի արևմտյան ափին մնացած որոշ զորամասերի: [Հուլիսի] 13-ին բոլորից շուտ մոտեցավ Կովկ. 7-րդ հրաձգ. գունդը, որը ստիպված էր երթային խոհանոցները և անվավոր գումակի մի մասը նետել Վանա լիճ, քանի որ լճի ափին ճանապարհ չկար, այլ միայն աննշան արահետ, իսկ Խանիկով անցնող շրջանցիկ ճանապարհը երկար էր, և ամենազվխավորը՝ այն հուլիսի 12-ին արդեն հակառակորդը գրավել էր:

Պլաստունյան բրիգադի շտաբի պետ, Գլխավոր շտաբի փոխգնդապետ Սերգենը, որը բրիգադի հրամանատար Մուդրիի հիվանդության պատճառով ստանձնեց բրիգադի հրամանատարությունը, որը, ի դեպ, ռազմական դրության համար թույլ նյարդեր ուներ<sup>27</sup>, ինձ մոտեցավ անլուրջ առաջարկով: Նա պահանջում էր անհապաղ նահանջել, ինչն արդարացնում էր նրանով, որ պատերազմի ժամանակ չի կարելի զորքի մեծ մասը զոհել հանուն փոքր մասի: Ես ստիպված էի նրան ասել, որ եթե նա շարունակի ինձ դիմել նման անհեթեթ պահանջներով, ես ստիպված կլինեմ նրան զրկել բրիգադի հրամանատարությունից, և ասացի, որ ես մի քայլ էլ չեմ անի Ադիջլազից, քանի դեռ բոլոր զորամասերը Մշո դաշտից չեն հասել Ադիջլազ:

7-րդ գնդից հետո եկավ Հայկական 2-րդ դրոմիան՝ շատ լավ վիճակով: Այստեղ ես առաջին անգամ հանդիպեցի Դրոյին, որն իր էներգիայով և կարգապահությամբ ինչպես իմ, այնպես էլ շրջապատի վրա լավ տպավորություն գործեց: Դրոմիան իր արտաքին տեսքով հիշեցնում էր կանոնավոր ու կարգապահ լավ զորամաս: Նրանք հետ մնացածներ չունեին:

2-րդ դրոմիանայից հետո եկավ Անդրանիկի 1-ին դրոմիանն ոչ այնքան լավ վիճակում: Մարդիկ խիստ հոգնած էին, որը հասկանալի էր: 1-ին դրոմիանայի մարդկանց մեծ մասը

26 **Մակակ Իվան Ռոմանի** (Մակաշվիլի Իվան Ռոմանզանի, 1855-?), գնդապետ:

27 Այսինքն՝ խուճապի էր մատնվում:

Մշո դաշտից էր: Նրանք շատ ընկճված, շատերի դեմքին լիակատար հիասթափություն և անտարբերություն էր [նկատվում]:

[Հայկական] 1-ինից հետո եկավ Ներչինսկյան կազակ. գունդը հեծելամարտկոցով: Ներչինսկյան գնդի հրամանատար, գնդապետ Վասիլը<sup>28</sup> ինձ զեկուցեց, որ Վանա լճի արևմտյան ափին մեր զորամասեր էլ չկան, և որ գեներալ Տրուփինը հայկական 3-րդ և 4-րդ դրուժինաների, Սիբիրյան կազակային մեկ գնդի հետ Դատվան և Ուրթաբ գյուղերից Վանա լճի հարավային ափով գնաց դեպի Վան քաղաք:

Այդ օրը Ադիջևազում ես ստացա զորքերի հրամանատար, գեներալ Յուդենիչի շնորհավորական հեռագիրը՝ Դիլմանի ճակատամարտի համար ինձ Գեորգիյան 4-րդ աստիճանի շքանշանով պարգևատրելու մասին:

Երբ բոլոր զորամասերը հավաքվեցին Ադիջևազում [Արծկե], ես հրավիրեցի ինձ մոտ ժամանած զորամասերի պետերին ու հարցրի, թե կարող են նրանց մարդիկ [զինծառայողները] քայլել, եթե ես գիշերը նահանջ նախաձեռնեմ: Դրոն ինձ պատասխանեց, որ դա չնայած դժվար է, սակայն եթե անհրաժեշտ է, ապա իր մարդիկ կդիմանան: Անդրանիկը ոչինչ չպատասխանեց. նա նստած էր խիստ մոայլված և ուժեղ ընկճված: Մնացած պետերը նույնպես համաձայնեցին նահանջել:

Մութն ընկնելուց հետո զորամասերը, համաձայն զորադասավորման, սկսեցին երթը՝ շարժվելով դեպի Վերին Սիփան գյուղը: Ես գնում էի վերջապահում: Մինչև Սիփան ողջ ճանապարհը լցված էր 1-ին դրուժինայի մարդկանցով: Ոչ մի ուժ չէր մնացել, որ անհնար էր նրանց արթնացնել: Համանման տեսարանի ես ականատես էի եղել Մուկդենյան մարտերի<sup>29</sup> ժամանակ, երբ մենք նահանջում էինք Խոշուտայ կայարանից, սակայն ավելի ահռելի չափերով: Բարեբախտաբար, հակառակորդը չգիտես ինչու մեզ չէր անհանգստացնում, և զորամասերը հանգիստ նահանջում էին: Գիշերը զորքը կենտրոնացավ Վերին Սիփանի մոտ: Ես ջոկատին մի քանի ժամով հանգիստ տվեցի, և երբ բոլոր հետ մնացածները տեղ հասան, շարունակեցի իմ ճանապարհը դեպի Նորշեն գյուղը: Վերջապահում գալիս էր Լաբինսկյան կազակ. գունդը, որը լուսավորում էր իմ [ջոկատի] թիկունքը: Նորշեն գյուղից, որտեղից գնում էր Մանազկերտ տանող ճանապարհը, հետախուզության նպատակով իմ կողմից ուղարկվել էր Ներչինսկյան կազակ. գունդը: Երբ դեռ մի քանի վերստ էինք հեռացել Նորշեն գյուղից, այդ գնդի հրամանատար, գնդապետ Վասիլը, վերադառնալով ռեկոմոսցիրովկայից<sup>30</sup>, ինձ զեկուցեց, որ Մանազկերտի ուղղությամբ հակառակորդի չի հանդիպել:

Այս զեկուցման հիման վրա ես որոշեցի թեթևացնել հոգնած զորքի երթը և վճռեցի հետևակը կարճ ճանապարհով ուղարկել Նորշեն, իսկ հրետանին փոքրաթիվ հեծյալ ստորաբաժանման պաշտպանությամբ ուղարկել ափամերձ խճուղային բարեկարգ ճանապար-

28 Վասիլ Աֆինոզեն Պրոկոպի (1872-1942)՝ գնդապետ, Ներչինսկյան կազակային գնդի հրամանատար, պատմաբան և գրող: Հեղինակել է եռահատոր «Забайкальские казаки, Чита, 1916-1918 гг.» աշխատությունը, որը վերահրատարկվել է 2007 թ. Բլազովեչենսկում:

29 Մուկդենի ճակատամարտը (6 փետրվարի - 3 մարտի 1905 թ.) տեղի է ունեցել ռուս-ճապոնական պատերազմի ժամանակ Մուկդեն (այժմ Շենյան) քաղաքի մոտ:

30 Լատիներեն recognosco՝ «դիտել, ստուգել»: Տեղանքի հետախուզության տեսակ, որը կատարում է անձամբ հրամանատարը, սկսած վաշտի հրամանատարից մինչև բանակի հրամանատար, լրացուցիչ ճշտումներ կատարելու համար:

հով: Եվ ահա երբ ես հետևակի հետ սկսեցի մոտենալ Նորշեն գյուղին, սրարշավ ինձ մոտեցավ Խոսյորյան կազակ. գնդի<sup>31</sup> գեներալ Շարպանտիեի կողմից ուղարկված, անչափ հուզված խորունժին<sup>32</sup> և զեկուցեց, որ Մանագլերտի կողմից շարժվում են թուրքական երեք շարայուներ, իսկ մեր թիկունքում հակառակորդը գրավել է Արճեշը և որ գեներալ Շարպանտիեն ինձ կանչում է իր մոտ: Գեներալ Շարպանտիեն իր ջոկատով գտնվում էր Նորշեն գյուղից մի քանի վերստ արևելք: Ես ապշել էի այդ տեղեկություններից և անհանգստացել, քանի որ թուլացրել էի [ջոկատը] հրետանին ուղարկելով շրջանցիկ ճանապարհով: Ես ասացի խորունժիին, որ դիրքեր գրավելուց և բոլոր կարգադրությունները տալուց հետո անմիջապես կգնամ գեներ. Շարպանտիեի մոտ: Ես նրան հայտնեցի, որ կասկածում եմ, որ Արճեշում կարող են լինել թուրքական կանոնավոր զորամասեր. որտեղի՞ց նրանք կարող էին այնտեղ հայտնվել, հավանաբար այնտեղ գործում է քրդական մի ինչ-որ ելուզակախումբ, որը որևէ վտանգ չի կարող ներկայացնել: Նրանց հետ հարցերը հաջողությամբ կլուծեն գումակայինները:

Ես դիրքեր ընտրեցի, կատարեցի կարգադրություններ դրանցում զորքերի տեղաբաշխման մասին և փոխանցեցի գեներալ Մուդրիին, որ մինչև իմ վերադառնալը ինքը ղեկավարի զորքերը, որին նա պատասխանեց, որ, համաձայն զեկուցագրի, ինքը հիվանդ է: Դրան ես պատասխանեցի, որ չեմ տեսնում, որ նա այդքան հիվանդ է: «Դուք ամբողջ ժամանակ ինձ հետ գալիս էիք ձի հեծած, և հիվանդությունը Ձեզ չէր խանգարում այդ անել: Ես կարծում եմ, որ Ձեր հիվանդությունը չի կարող Ձեզ խանգարել, որ Դուք ժամանակավորապես մինչև իմ վերադառնալը, ղեկավարեք նաև ջոկատը»:

Այդ ժամանակ ինձ մոտեցավ Ներչինսկյան կազակ. գնդի հրամանատար, գնդապետ Վասիլևը, որին ես հարցրին. «Այդ ինչպե՞ս է եղել, որ ռեկոզնոսցիորովկայի ժամանակ չեք նկատել Մանագլերտի ճանապարհով առաջացող թուրքական զորայուները»: Նա ինձ պատասխանեց, որ եթե իր աչքերը երբեմն իրեն խաբում են, ապա նույնը չի կարող ասել իր հեռադիտակի մասին, որը երբեք իրեն չի խաբում: Այստեղ ինչ-որ թյուրիմացություն կա: Նա այդ ճանապարհի վրա որևէ զորայուն չի տեսել: Եվ անմիջապես կրկին մեկնեց այնտեղ ռեկոզնոսցիորովկայի: Այս խոսակցությունից հետո ես իմ շտաբի պետի հետ գնացի գեներալ Շարպանտիեի մոտ: Ճանապարհին ինձ հասավ գնդապետ Վասիլևը և զեկուցեց, որ գեներ. Շարպանտիեի կողմից Մանագլերտ տանող ճանապարհ էր ուղարկվել ռոտմիստր<sup>33</sup> Գամրիկելիի հրամանատարությամբ Նիժեգորոդյան դրագունյան գնդի հեծելավաշտ, և ռոտմիստրը սխալմամբ ռեկոզնոսցիորովկա կատարող ներչինցիներին նույնացրել է հակառակորդի զորայուների հետ: Նա [գնդապետ Վասիլևը] հենց այդ պահին կատարում էր ռեկոզնոսցիորովկա երեք զորայուներով, ինչը պարզվեց ռոտմիստրի հետ ունեցած զրույցի ժամանակ: Դրանից հետո ես հրաման ուղարկեցի գեներալ Մուդրիին զորքերը դուրս բերելու դիրքերից և շարժվելու Նորշեն գյուղը, հակառակորդի ուղղությամբ ուղարկելու հեծյալ պարեկախմբեր, իսկ ինքս գնացի գեներալ Շարպանտիեի մոտ և զեկուցեցի ամեն ինչի մասին: Իմ զեկուցման ժամանակ Արճեշից հեռախոսով հայտնեցին, որ այնտեղ

31 Լրիվ անվանումն է՝ Կուբանյան կազակային զորքերի Նորին կայսերական մեծության մեծ իշխանուհի Անաստասիա Միխալովնայի 1-ին Խոսյորյան գունդ (1870-1918):

32 Առաջին կրտսեր սպայական կոչումը կազակային զորքերում:

33 Ռոտմիստր՝ սպայական կոչում ռուսական հեծելազորում, որը հավասարագոր է հետևակի կապիտանի կոչմանը:

թուրքեր չկան, կան միայն զինված քրդեր: Նրանց դեմ ուղարկված գումակային ստորաբաժանումը նրանց մեծ կորուստներ պատճառելով քշեց լեռները:

Գեներալ Շարպանտիեն և նրա շտաբի անդամները, տեղեկանալով իմ Գեորգիայան խաչով պարգևատրվելու մասին, շնորհավորեցին Սևերսկյան գնդի հրամանատարից հայթայթված շամպայնով, որը մենք խմեցինք:

Գեներալ Շարպանտիեն շուտով իր ջոկատի հետ դուրս եկավ հանգստավայրից և շարժվեց դեպի Արճեշ, իսկ ես իմ ջոկատի հետ, գիշերելով Նորշեն գյուղում, հուլիսի 15-ին հեռացա Արճեշ: Այդ ողջ ժամանակ մարդիկ թերի էին սնվում, քանի որ մթերք գրեթե չկար և տապի պայմաններում փոշոտ ճանապարհով ուժեղ շոգին քայլելով մարդիկ շատ էին թուլացել: Դժվարությամբ էինք կարողանում կատարել անցումները: Մեծ թիվ էին կազմում հետ մնացածները, հատկապես՝ պլաստունների և Հայկական 1-ին դրոժինայի մոտ: Այդ գործամասերում նկատում էին կազմալուծման նշաններ: Պլաստուններին ես անմիջականորեն չէի ճանաչում: Ես ստիպված էի դիտողություններ անել գումարտակների հրամանատարներին և բրիգադի ժամանակավոր հրամանատարին: Ի միջի այլոց, այդ նույն պլաստուններն էին անկասելիորեն մարտի նետվում, երբ ես Բաշկալե քաղաքից դեպի հարավ հետապնդում էի Հալիլ բեյին, որի համար էլ արժանացան մարտական գործողություններին ներկա ամերիկյան լրագրողի հիացմունքին:

Վանա լճի հյուսիսային ափով մեր այդ տեղաշարժերի ժամանակ ինձ մոտ միտք հղացավ իմ ջոկատով Նորշեն գյուղից ուղևորվել դեպի Մանազկերտ՝ հակառակորդի թիկունքը: Դա մեծ օգնություն կլիներ Կոփի ջոկատին: Այդ միտքը ես հայտնեցի իմ շտաբի պետին, սակայն նա հիմնավորապես մերժեց, քանի որ դա ռիսկային առաջադրանք է: Մեր գործամասերն անընդհատ տեղաշարժերի ու թերսնման պատճառով ուժասպառ էին եղել, բացի այդ՝ չկա պարենի որևէ պաշար, որը հնարավոր է տեղում գտնել, իսկ ամենագլխավորը՝ մարդիկ չափազանց հյուծված են: Չէ՞ որ հունիսի 28-ից սկսած՝ անընդհատ մարտերի ու արշավների մեջ են: Ես ստիպված էի դառնությամբ համաձայնել շտաբի պետի փաստարկների հետ: Ի միջի այլոց այդ գործողությունը զգալի ուժերով ձեռնարկվելու պարագայում կարող էր ահռելի նշանակություն ունենալ:

Վերջապես Արճեշում գեներալ Շարպանտիեն ստանձնեց ջոկատի հրամանատարությունը: Բարեբախտաբար, մենք Արճեշում գտանք որոշ քանակությամբ պաքսիմատ, որը զգալիորեն թեթևացրեց մեր դրությունը:

Հավանական մարտերի համար ընտրեցի պաշտպանական դիրքեր և սկսեցի դրանք ամրացնել: Գեներալ Շարպանտիեն իր շտաբի պետի հետ դրանք դիտեց և հավանություն տվեց: Հետախուզությունը կատարում էին լաբինսկցիները և ներչինցիները:

Արճեշում գտնվելու ժամանակ ստիպված էինք պայքարել մարդկանց [զինծառայողների] դեմ, որպեսզի չավերեն շինությունները և չջարդեն կահույքը: Զարմանալի էր այդ հարցում մեր զինվորների և հատկապես կազակների վերաբերմունքը: Արճեշում կար մեծ քանակությամբ փայտ, մի մասը՝ անգամ չոր, սակայն կազակներն իրենց կաթսայիկները տաքացնելու համար անպայման գողանում էին ընկուզենուց պատրաստված փորագիր կահույքը կամ էլ հենց նույն նպատակով ջարդում էին շինությունների փեղկերն ու պատուհանները: Նրանք իրենց գործողությունները բացատրում էին նրանով, որ այդ փայ-

տով կաթսայիկներն ավելի լավ [արագ] են տաքանում: Ստիպված էի նման երևույթները կասեցնելու համար նշանակել ստորաբաժանում սպայի գլխավորությամբ:

Հուլիսի 16-ին հեռագիր ստացա բանակի հրամանատար, գեներալ Յուդենիչից առաջարկությամբ՝ կարո՞ղ եմ ես արդյոք իմ ջոկատով Արճեշից շարժվել Պատնոս՝ հակառակորդի թիկունքը, և դրա համար կա՞ արդյոք պաքսիմատի պաշար: Ստիպված էի խոր ցավով պատասխանել, որ ինձ մոտ պաքսիմատի որևէ պաշար չկա: Այդ հեռագիրը ուղարկելուց հետո ես խորապես տառապում էի: Չէ՞ որ միայն իմ [զորամասի] շարժումը ահռելի բարոյական ազդեցություն կունենար հակառակորդի վրա՝ բացի մարտում ունեցած հաջողությունից, որում ես իհարկե չէի կասկածում, և դա բավականին կբարձրացներ մեր նահանջող զորքերի մարտական ոգին:

Որևէ արգելք չէր լինի այդ պլանի իրականացման համար, եթե ճիշտ կազմակերպված լիներ պարենի մատակարարումը, և որոշ կարևոր կետերում ստեղծված լինեին պահեստներ, ինչի համար ժամանակ քիչ չէր եղել: Եվ այդ դեպքում որևէ արգելք չէր լինի այդ պլանի իրականացման համար, որը ես մտածել էի կատարել իմ նախաձեռնությամբ՝ մինչև բանակի հրամանատարի հեռագրի ստացումը: Ես առանձնակի ուշադրություն չէի դարձնի իմ ջոկատի հոգնածությանը և որոշ զորամասերի քայքայվածությանը, քանի որ իմ բրիգադի հրաձիգները և Հայկական 2-րդ դրոժինան այդ գործողության իրականացման համար հուսալի էին:

Հուլիսի 17-ին՝ ցերեկը, ինձ մոտ եկավ Կովկասյան հեծյալ դիվիզիայի շտաբի պետ, գնդապետ Կորգանովը<sup>34</sup> և հայտնեց, որ Անդրանիկը, առանց բարձրագույն ղեկավարությանը տեղեկացնելու, կազմացրում է իր դրոժինան և հրաժարվում է դրոժինայի հրամանատարի պարտականությունից: Անհրաժեշտ է համոզել, որ նա դա չանի: Հակառակ դեպքում խիստ կտուժի, բացի այդ՝ նրա արարքը կխայտառակի ողջ հայությանը ընդհանրապես: Լավ իմանալով իմ հարաբերությունները Անդրանիկի հետ՝ նա խնդրեց խոսել նրա հետ և համոզել, որ նման բան չանի, հակառակ դեպքում նա վատ վիճակում կհայտնվի, քանի որ գեներալ Շարպանտիեն նրա հետ նրբանկատ չի լինի: Այդ խոսակցությունից հետո ես գնացի Անդրանիկի մոտ: Ճանապարհին հանդիպեցի Դրոյին, և նա նույնպես եկավ ինձ հետ: Անդրանիկի մոտ մտնելիս խնդրեցի Դրոյին ինձ հետ չմտնել, քանի որ լավ գիտեի, որ նրա ներկայությամբ ինձ դժվար կլինի համոզել Անդրանիկին:

Մտնելով սենյակ՝ ես տեսա Անդրանիկին, որ քայլում էր սենյակում խիստ հուզված տեսքով: Ես նրան հարցրի, թե ինչ է պատահել: Նա սկսեց գոռալ, որ նման պայմաններում, թե ինչպես ենք մենք վարում մարտական գործողությունները, այսինքն՝ գրեթե միշտ նահանջում ենք և սխալներ կատարում, նա չի կարող ղեկավարել դրոժինան, և որ նրա մարդիկ, որոնք հիմնականում Մշո դաշտից են, այլևս չեն ցանկանում կռվել ու ծառայել: Այդ ժամանակ կոճկամայրից պոկեց իր զինվորական Գեորգիլյան խաչը և նետեց գետնին: Ես նրան ժամանակ տվեցի մի փոքր հանգստանալու և հետո սկսեցի համոզել, որ

34 Կորգանով (Ղորղանյան) Գաբրիել Գրիգորի (1880-1954)՝ գեներալ-մայոր, 1915 թ. փետրվարի 20-ից մինչև 1916 թ. հուլիսին՝ Կովկասյան 2-րդ բանակային կորպուսի շտաբի պետի պաշտոնավատար, Փարիզի հաշտության կոնֆերանսում ՀՀ պատվիրակության ռազմական խորհրդակալ: Հեղինակ է հուշերի՝ Korganoff G., La Participation des Armeniens a la Guerre Mondiale sur le Front du Caucase (1914-1918), Paris, 1927, Ղորղանյան Գ., Հայերի մասնակցությունը համաշխարհային պատերազմին, թարգմ. ֆրանսերենից, Փարիզ, 1931, Корганов Г. Г., Участие армян в мировой войне на Кавказском фронте (1914-1918), Пер. с фр. Пирумян Ю. Л., Долбакян Э. Е., Ред. Долбакян Э. Е., Мелик-Шахназаров А. А., Москва, 2011:

նման բան չանի, հակառակ դեպքում նա կարող է տուժել, և նրա անձնական ու դրուժինիկների գործողություններն առիթ կտան, որպեսզի բացասաբար վերաբերվեն հայերին:

Ցավոք, այդ ժամանակ հայերի վերաբերյալ ոչ բարենպաստ լուրեր էին տարածվում<sup>35</sup> ինչպես բարձրագույն, այնպես էլ ստորին ղեկավար անձանց շրջանում: Ես նրան հիշեցրի, որ մենք՝ հայերս, մեծ թվով թշնամիներ ու չարակամներ ունենք, որոնք, սխալ ներկայացնելով մեր գործողությունները, իրենց բոլոր ուժերով ձգտում են վարկաբեկելու մեր ժողովրդին: Նա վերջապես ընդունեց իմ փաստարկները ու համաձայնեց հետևել իր ջրկատի հետ:

Դրանից հետո ես գնացի գնդապետ Կորգանովի մոտ ու հայտնեցի Անդրանիկի հետ իմ խոսակցության արդյունքների մասին: Կորգանովն ինձ փոխանցեց գեներալ Շարպանտիեի խնդրանքը, որ Թորթոնի մոտ հուլիսի 2-ին տեղի ունեցած մարտի համար Սևերսկյան դրագունյան գնդի հրամանատար, գնդապետ Կոպաչյովին<sup>36</sup> ներկայացնեմ գեներալի կոչման: Ցավոք, մեզ մոտ ընդունված էր, որ եթե դիվիզիաների պետերը ցանկանում են ազատվել անպետք հրամանատարից, ապա նրա պաշտոնը բարձրացնում են, միայն թե ազատվեն նրանից՝ չմտածելով, որ իրենց այդ գործողություններով սարսափելի վնաս են հասցնում բանակին: Ես համաձայնեցի այն պայմանով, որ նա նույնպես [Շարպանտիեն] գ. Փուրխուսի մոտ տեղի ունեցած մարտում աչքի ընկնելու համար գեներալի կոչման ներկայացնի իմ [բրիգադի] Կովկ. 7-րդ հրաձգ. գնդի հրամանատար, գնդապետ Օբրագովին, որը քաջ էր ու բոլոր տեսակետներից արժանի: Կորգանովը խոստացավ հաղորդել իմ խնդրանքը գեներալ Շարպանտիեին ու երաշխավորեց, որ գեներալը կկատարի իմ խնդրանքը:

Զգիտեմ կատարե՞ց արդյոք գեներալն իմ խնդրանքը, բայց գնդապետ Օբրագովին կոչում չշնորհվեց<sup>37</sup>, իսկ գնդապետ Կոպաչյովը բանակի շտաբում ունեցած կապերի շնորհիվ երկու շաբաթ անց դարձավ գեներալ՝ նշանակվելով Կովկասյան հեծելազորային դիվիզիայի բրիգադի հրամանատար, որի պաշտոնն այդ ժամանակ թափուր էր: Այդպես գեներալ Շարպանտիեին չհաջողվեց նրանից ազատվել:

Հուլիսի 18-ին ջրկատը շարունակում էր մնալ Արճեշում: Այդպիսով պատերազմ հայտարարելու տարեդարձը ստիպված էինք դիմավորել այդ քաղաքում: Ակամա սկսեցի մտորել, թե այդ տարվա ընթացքում ինչ ենք մենք արել ինչպես Արևմուտքում<sup>38</sup>, այնպես էլ էր փոքրասիական ռազմաճակատում: Ցավով կարելի էր փաստել շատ, շատ քիչ, և ի միջի այլոց ահռելի էր մարդկային, նյութական և դրամական կորուստը: Իմ կարծիքով մեր Կովկասյան 4-րդ բանակային կորպուսն անհաջողություններ կրեց, քանի որ չէր կազմվել մարտական գործողությունների պլան: Ունենալով ուժերին համապատասխան որոշակի պլան՝ պետք էր հետևողականորեն իրականացնել այն և գրավված հողի յուրաքանչյուր պատահիկը հիմնավորապես ամրացնել, այլ ոչ թե ձգտել տպավորություն

35 Այսպես, օրինակ՝ իբր «Սարիղամիշի անտառներում հայերը հուլիսին են ռազմամթերք թուրքերի համար»: Տե՛ս «Համբավաբեր», Թիֆլիս, 1916, № 12, 13 մարտի, էջ 360:

36 Կոպաչյով Նիկոլայ Նիկոլայի (1860-?) գեներալ-մայոր (1915), Սևերսկյան 18-րդ դրագունյան գնդի հրամանատար, Կովկասյան հեծյալ դիվիզիայի 1-ին բրիգադի հրամանատար, «Սպիտակ շարժման» մասնակից:

37 Գնդապետ Վ. Օբրագովին գեներալի կոչում շնորհվեց միայն 1917 թ. ապրիլի 4-ին: Նա միաժամանակ պարզատրվել է Գեորգիևյան 4-րդ աստիճանի շքանշանով:

38 Նկատի ունի ռուս-գերմանական և ռուս-ավստրիական ռազմաճակատները:

գործելու համար գրավելու որքան հնարավոր է շատ տարածքներ, որից հետո նահանջել գրեթե մինչև սահմանը և հակառակորդին հանձնել այդպիսի մեծ դժվարությամբ ու անուղի գոհերի [գնով] գրավվածը, և ամենակարևորը՝ չպետք նահանջից հետո գրավված գյուղերի ու քաղաքների բնակիչներին դնել սարսափելի վիճակի մեջ:

Մեր 4-րդ կորպուսի՝ վերջին ժամանակների անհաջողությունների ամենազլխավոր պատճառն այն էր, որ գեներալ Օգանովսկին ցրել էր իր ուժերը՝ ձգտելով միանգամից գրավելու ամեն ինչ՝ Կոփը, Մուշը, Բիթլիսը և Խնուարը՝ չգիտես ինչու թերագնահատելով հակառակորդին, ընդհանրապես տեղյակ չլինելով նրա ուժերի մասին: Ցավոք սրտի, այդ սխալները մեզանում միշտ կատարվում էին թուրքերի հետ մեր բոլոր պատերազմներում:

Ինչպես սպաների, այնպես էլ զինվորների տրամադրությունը ընկճված էր: Իհարկե, հոգու խորքում սպաներն ու զինվորները մեղադրում էին մեզ՝ բարձրաստիճան պետերին, ինչում նրանք մասամբ իրավացի էին:

Բանակի հրամանատարից կարգադրություն էր ստացվել, որ Արճեշի ջոկատը շարունակի նահանջել դեպի Բերկրի-կալե քաղաքը, իսկ Կովկասյան հեծելազորային դիվիզիան շտապ շարժվի Ալաշկերտի հովիտ: Հեծելազորային դիվիզիան վաղ սկսեց երթը, և ես ստիպված էի կրկին ստանձնել ջոկատի հրամանատարությունը: Իմ ջոկատը կազմված էր Կովկասյան 5-րդ հրաձգ. գնդի 2 գումարտակից, Կովկ. 7-րդ հրաձգ. գնդի 2 գումարտակից, Կուբանյան 3-րդ պլաստունյան բրիգադի 2 գումարտակից, Հայկական դրոժինաների երկու գումարտակներից (1-ին և 2-րդ), մեկ լեռնային և մեկ թեթև մարտկոցներից, Լաբինսկյան կազակ. գնդից և Ներչինսկյան կազակ. գնդից: Ասիական ռազմաճակատի ուժերը նշանակալից էին: Եթե այս ուժերը կորպուսի հրամանատարի բռունցքում լինեին, գուցե ստիպված չէինք լինի հապշտապ նահանջել դեպի մեր սահմանը:

Հուլիսի 19-ին այս ջոկատով շարժվեցի Առնիս: [Հուլիսի] 20-ին դուրս եկա Առնիսից, որպեսզի պաշտպանեմ մեզ հետ նահանջող դժբախտ փախստականների բազմությանը, որոնք վերադարձել էին իրենց գյուղերը մեր հապշտապ հարձակման ժամանակ ու նույնիսկ հասցրել էին որոշակի տնտեսություն ստեղծել, և որոնք այժմ ստիպված էին երկրորդ անգամ ամեն ինչ վերցնել և փախչել փոշոտ ճանապարհով ու ուժեղ տապի պայմաններում, սոված ու բարոյապես սպանված:

Ես առանձացրի ջոկատ, որը կազմված էր Կովկ. 7-րդ հրաձգ. գումարտակի<sup>39</sup> մեկ գումարտակից, Հայկական 1-ին և 2-րդ դրոժինաներից, մեկ թեթև մարտկոցից և Ներչինսկյան կազակ. գնդից, որոնց հրամայված էր մնալ Առնիսում, քանի դեռ Արճեշի շրջանից ու Վանից բոլոր փախստականները չեն անցել Բերկրի-կալե, իսկ ինքս [հուլիսի] 20-ին մնացած ջոկատով շարժվեցի Բերկրի-կալե:

Մոտենալով Բերկրի-կալեի ձորին՝ ես տեսա ք. Վանից ու շրջակա գյուղերից հապշտապ նահանջող փախստականների բազմություն: Կրկին նույն զգայացունց տեսարանը, որ ես տեսել էի 1914 թ. դեկտեմբեր ամսին, երբ մենք նահանջում էինք Պարսկաստանի Սալմաստից: Նայելով այդ տնազուրկ փախստականներին՝ ես մեծ տարակուսանքի մեջ էի, քանի որ Վան քաղաքին որևէ վտանգ չէր սպառնում, և, բացի այդ, ճանապարհը դեպի Վան հարավային ծովեզրից ապահովված էր գեներալ Տրուխինի ջոկատով:

---

39 Գնդի:

(Հայկական 3-րդ և 4-րդ դրուժինաների գումարտակները, սահմանապահների 1 գումարտակ և սիբիրյան կազակ. գունդը՝ մեկ մարտկոցով), իսկ հյուսիսային ափը՝ առայժմ իմ ջոկատով, և, բացի այս ամենից, Վանում զգալի ուժեր կային: Շուտով հարցումիործից տեղեկացա, որ գեներալ Նիկոլանը<sup>40</sup>, որն իր ջոկատով գտնվում էր Վանում և դրա շրջակայքում, հապշտապ լքել է Վանը և իմ գալուց առաջ անցել Բերկրի-կալեով և, իհարկե, այդ հապճեպ գործողությամբ ուժեր խուճապ էր առաջացրել վանեցիների ու շրջակա գյուղերի բնակիչների շրջանում:

Այդ նահանջը, որը որևէ հիմք չուներ, անհրաժեշտ է համարել հանցավոր: Ինչպես վերը ասել էի, գեներալ Նիկոլանի ջոկատին բացարձակապես վտանգ չէր սպառնում: Հակառակորդը չէր նեղում, և չէր էլ երևում, որ նա զգալի ուժեր ունի: Հակառակորդը, բնականաբար, բոլոր ուժերն ուղղել էր Մանազկերտի վրա: Եվ վերջապես հակառակորդի՝ մեծ ուժերով հարձակման դեպքում գեներալ Նիկոլանը ծայրահեղ դեպքում միշտ էլ հնարավորություն ուներ նահանջելու եթե ոչ Բերկրի-կալե, ապա դեպի Պարսկաստան՝ Սարայ, Կոթուր և Խոյ: Հետագայում հանգամանքները ցույց տվեցին գեներալ Նիկոլանի նահանջի կամ ավելի ստույգ՝ փախուստի անհիմն լինելը: Բայց չէ՞ որ այդ ոչ խելամիտ քայլի հետևանքը մեծ թվով փախստականների մահը եղավ<sup>41</sup> և նրանց լիակատար սննկացումը: Բացի այդ՝ վանեցիները, փախչելով Վանից, հրդեհեցին իրենց տները. այստեղ ևս ես մեղադրում եմ գեներալ Նիկոլանին, որը պետք է դա արգելելը՝ լավ իմանալով, որ վերջիվերջո մեր զորքերը կրկին կգրավելու են Վանը<sup>42</sup>:

[Հուլիսի] 20-ին իմ ջոկատը եկավ Բերկրի-կալե՝ բացի Առնիսի ջոկատից: Գալով Բերկրի-կալե՝ ես կարգադրեցի Առնիսի ջոկատին նույնպես նահանջել Բերկրի-կալե, իսկ Ներչինսկյան կազակ. բրիգադին և թեթև հրետանուն՝ գնալ Վան և միանալ գեներալ Տրուխինի ջոկատին: Հետագայում գեներալ Տրուխինն իր ջոկատով անցավ Պարսկաստան:

Այստեղ՝ Բերկրի-կալեում, ես հրաման ստացա առանց դադարի շարժվելու դեպի մեր սահմանը: Չցանկանալով փախստականներին թողնել հոշոտվելու քրդերի կողմից (այդ շրջանը բացառապես բնակեցված էր քրդերով)՝ փախստականներին մինչև սահման ուղեկցելու պարտականությունը հանձնարարեցի Անդրանիկին և Դրոյին<sup>43</sup>: [Հունիսի] 20-ին Առնիսից ստացա Անդրանիկի հեռագիրը՝ հետևյալ բովանդակությամբ. «Ինչպես ես [ար-

40 Ն. Կորսունը նմանապես փաստում է, որ Ա. Նիկոլանն այնքան հապճեպ է լքել Վանը, որ չի տարհանել անգամ հիվանդներին ու վիրավորներին: Միաժամանակ Վանի պաշտպանության համար նախատեսվում էր թողնել հայկական խմբերին, «Եթե նրանք ցանկանային» (տե՛ս Кореун Н. Г., նշվ. աշխ., էջ 113): Ինքնին հասկանալի է, որ սա միայն ռուսական հրամանատարության անորոշ ձևակերպումն էր, քանի որ նրանք հրաժարվել էին քաղաքի պաշտպաններին անհրաժեշտ քանակությամբ զենք ու զինամթերք թողնելուց: Բացի այդ բնակչության շրջանում սկսվել էր անկառավարելի ու քառասյին խուճապ:

41 Ամերիկացի միսիոներները մեկ տարի անց՝ 1916 թ., լինելով Բերկրի կիրճում, հաշվել էին մոտ յոթ հազար մարդկային կմախքներ (տե՛ս Усшер С. Д., Knapp G. H., An American Physician in Turkey. A Narratives of Adventures in Peace and War, New York, Boston, 1917, էջ 312): Իրականում զոհվածների թիվն ավելի մեծ էր: Հայերը զոհ էին դարձել հիմնականում քրդական հարձակումներին: Նույն միսիոներների վկայությամբ՝ «Հայերը և մայրերը պայանում էին իրենց երեխաներին, որպեսզի նրանց փրկեն թուրքերից» (նույն տեղում, էջ 311):

42 Կովկասյան բանակի օպերատիվ բաժանմունքի պետ, գնդապետ, հետագայում գեներալ Ե. Մալովսկին իր ուսումնասիրության մեջ գրում է, որ թուրքական 3-րդ բանակը, անցնելով հարձակման, Վանի շրջանում միայն առաջակալ ստորաբաժանումներ տեղակայեց՝ նպատակ չունենալով այդ ուղղությամբ որևէ հարձակողական գործողություն ձեռնարկելու (տե՛ս Масловский Е. В., նշվ. աշխ., էջ 180): Օսմանյան հրամանատարության գլխավոր նպատակը Կովկասյան 4-րդ բանակային կորպուսի շրջապատումն ու ջախջախումն էր:

43 Ինչպես նշում է Ա. Հարությունյանը, նահանջի ժամանակ փախստականների մի մեծ խումբ ընկնում է թշնամու կազմակերպած թակարդը, «Սակայն 2-րդ դրուժնայի (հրամանատարի - Ռ. Ս.) գործողությունների և օգնության հասած ռուսական զորամասերի շնորհիվ չափազանց ծանր պայմաններում հնարավոր եղավ փրկել փախստականներին...» (տե՛ս Арутюнян А. О., նշվ. աշխ., էջ 301):



դեն] զեկուցել էի Ձերդ գերազանցությանը, իմ դրուժինայի անձնակազմի 85%-ը Մշո դաշտից, Կուփից, Բուլանխից և Խնուսից են: Այդ դրուժինիկների՝ հրաշքով փրկված որբերն այժմ այստեղ կամ այնտեղ են ցրված և նրանց օգնության կարիքն ունեն: Այդպիսի դրուժինիկներին ես հեռացրի: Մնացածների մեծ մասը հոգնած է, ոտաբորբիկ է քայլում և նույնպես ցանկանում է հեռանալ: Խնդրում եմ խորհուրդ տալ՝ ինչպե՞ս վարվել: Եթե հնարավոր է, խնդրում եմ կապվեք գեներալ Նիկոլակի հետ և թույլ տվեք ինձ գնալ Իգդիր՝ համալրման համար: Հայկական դրուժինայի հրամանատար Անդրանիկ»:

Ամեն անգամ քիչ թե շատ երկարատև մարտերից ու օրագնացներից հետո Անդրանիկը ձգտում էր իր դրուժինայի հետ հասնելու Իգդիր կամ Երևան: Եթե դա իրեն չէր հաջողվում, ապա ինքը, առանց որևէ թույլտվության, գնում էր հանգստի և լուսաբանում էր այդ մարտերն ու մարտական գործողությունները թուրքահայերին [արևմտահայերին]: Նրանք բոլորն էլ հավատում էին նրան և ամեն ինչին նայում նրա հայացքներով [տեսակետներով]՝ համոզված լինելով, որ իր գործողություններում միայն Անդրանիկն է անսխալական, իսկ մյուսները մեղավոր են, որ նրան չեն լսում: Իհարկե, այս գովազդը նրա օգտին էր, և նա ավելի ու ավելի մեծ հեղինակություն էր ձեռք բերում ոչ միայն թուրքահայերի [արևմտահայերի], այլև ռուսահայատակ հայերի շրջանում:

Երբ Անդրանիկն Առնիսից եկավ իր դրուժինայի հետ, ես նրան կանչեցի ու հայտնեցի, որ փախստականների պաշտպանությունը հանձնարարաում եմ իրեն ու Դրոյին, և որ նրանք պետք է փախստականների հետ գնան մինչև Իգդիր:

Հուլիսի 21-ին ես շարունակեցի իմ նահանջն առանց հայկական դրուժինաների: Հետագայում Դրոն ինձ ասաց, որ իմ հեռանալուց հետո Անդրանիկը չի ցանկացել կատարել փախստականներին պաշտպանելու իմ հանձնարարությունը: Նա այսպես արտահայտվեց, թե մտադիր չէ պաշտպանել հայկական հրեաներին: Նա այդպիսին էր համարում Վանի վիլայեթի հայերին, հատկապես՝ քաղաքացիներին: Ուստի նա հետևեց ինձ իր դրուժինայի հետ դեպի Իգդիր: Դրոն ստիպված էր իր դրուժինայի հետ ապահովել փախստականների նահանջը, և նրան կամավոր իր հեծելավաշտով միացավ սահմանապահ զորախմբի ռոտմիստր Կորոլկովը<sup>44</sup>:

Բերկրի-կալեից իմ ջոկատը վաղ դուրս եկավ և գիշերեց Թոնդուրեկ գյուղի մոտ: Ողջ ճանապարհը լցված էր դժբախտ փախստականներով: Ճանապարհին ընկած էին ծերունիների ու երեխաների մի քանի դիակներ: Ես ոչ մի կերպ չէի կարողանում հանգստանալ գեներալ Նիկոլակի աննպատակ ու արագ նահանջի պատճառով, որի հետևանքով բազմաչարչար հայ ժողովուրդը նման աղետի մեջ հայտնվեց: Որքան հնարավոր էր, հրաձիգները և կազակները աշխատում էին օգնել նրանց:

[Հուլիսի] 22-ի անցումը երկար էր: Մարդիկ [զինծառայողները], օրագնացը կատարելով առանց հանգստանալու, ցերեկվա բավականին բարձր ջերմաստիճանի և անբավարար ուտելիքի պայմաններում, սաստիկ հոգնել էին ու դժվարությամբ էին քայլում, հատկապես՝ թույլերը, որոնց թիվը քիչ չէր վաշտերում: Չէ՞ որ երկրորդ ամիսն է, ինչ կատարում ենք անընդհատ օրագնացներ մարտերով: Շատ հետ մնացողներ կային ոչ միայն

44 Կորոլկով Ալեքսանդր Անտոնի Լոտմիստր, ծառայել է Երիվանյան 27-րդ սահմանապահ բրիգադում:

պլաստոններից, այլև հրաձիգներից: Մարդիկ կամաց կամաց կենտրոնանում [մոտենում] էին, ինչի համար ստիպված էի հաճախ կանգ առնել:

[Հուլիսի] 23-ին անցում կատարվեց Թափարիզի լեռնանցքով դեպի Կրզըլ-Դիզա գյուղը: Անցումը համեմատաբար հեշտ կատարվեց: Ավելի ու ավելի էինք մոտենում մեր սահմաններին: Հրաձիգների հիացմունքը սահման չունեի, երբ նրանք տեսան Մեծ ու Փոքր Արարատները: Բոլորիս վրա ինչ-որ հարազատության շունչ փչեց: Այստեղ Կրզըլ-Դիզայում, մենք երկար ժամանակ անց ստացանք նամակներ ու թերթեր: Օրակացը Կրզըլ-Դիզայում էր: Մարդիկ փոքր-ինչ հանգստացան, վլացին սպիտակեղենը, որքան կարողացան, վերանորոգեցին կոշիկներն ու հագուստը: Համբարակային պահեստից ստացանք զգալի քանակությամբ պաքսիմատ, հաց, թեյ ու շաքար: Այնպես որ հաջողվեց անգամ փոքր-ինչ լրացնել անձեռնմխելի պաշարը:

Օրակացի ժամանակ Կրզըլ-Դիզայում ինձ պատահաբար այցելեց այնտեղ գտնվող Դիլման քաղաքի նախկին նահանգապետը: Միասին հիշեցինք 1915 թ. ապրիլի թուրքերի հարձակումը Դիլմանի վրա: Նա Ռուսաստանի թունդ կողմնակիցն էր: Այստեղ Կրզըլ-Դիզայում, տեղեկացա, որ մեր կորպուսը, Սարիղամիշի ճակատից նշանակալի համալրում ստանալով, անցել է հարձակման:

Մինչ ես իմ ջոկատով առաջ էի շարժվում Վանա լճի հյուսիսային ափով, որից հետո՝ հյուսիս՝ դեպի Կրզըլ-Դիզա գյուղը, Կոփի ուղղությամբ տեղի էին ունենում հետևյալ մարտական գործողությունները՝: Կոփի ջոկատը մոտավորապես կազմված էր հետևյալ զորամասերից՝ 66-րդ հետևակային դիվիզիան իր հրետանիով, Կովկ. 5-րդ հրաձգ. գնդի 1 գումարտակ, Կովկ. 6-րդ հրաձգ. գունդ, Կովկ. 2-րդ հրաձգ. հրետ. դիվիզիոնի մեկ լեռնային մարտկոց, Կուբանյան 3-րդ պլաստունյան բրիգադի 2 գումարտակ, Դոնեցիների 3-րդ հետևակային բրիգադ, Կովկասյան հեծելազորային դիվիզիայի Թերեքյան դրագունյան և Խոպյորյան գնդեր, 2-րդ [հավաքական] կազակային դիվիզիա և մի քանի հետևակ դրուժինաներ:

Ինչպես ասվեց վերևում, հակառակորդը մեծ համալրում էր ստացել և, հուլիսի 10-ին այն կենտրոնացնելով երեք կետերում, անցավ վճռական հարձակման [գյուղ] Լիզից դեպի Կարաբաշիր, Օդինչար գյուղի կողմից՝ դեպի Կոփ ու Խանկի (Խանիկ-քյոյ) կողմից՝ դեպի Մանազկերտ՝ ձգտելով շրջառել մեր երկու թևերը: Ըստ մեր կորպուսի հետախուզությունը դեկավարող<sup>45</sup> սպա, պրապորշչիկ Դևոյանի<sup>46</sup> տեղեկության՝ թուրքերը կենտրոնացրել էին

\* Այստեղ Թ. Նազարբեկյանը խախտում է իր շարադրանքի ժամանակագրությունը՝ վերադառնալով 1915 թ. հուլիսի սկզբներին Կոփի շրջանում ծավալված մարտերի նկարագրությանը:

45 Գեներալի կողմից հիշատակվող սպան՝ Տ. Ղևոյանը, Կովկասյան 4-րդ բանակային կորպուսի հետախուզական բաժանմունքի աշխատակից էր, այլ ոչ թե կորպուսի ողջ հետախուզության ղեկավար:

46 **Ղևոյան Տիգրան** (1890/1894-1965) ՀՅԴ անդամ: Առաջին աշխարհամարտի սկզբին ակտիվ մասնակցություն է ունեցել հայ կամավորական շարժմանը: Կովկասյան 4-րդ բանակային կորպուսի հետախուզական բաժանմունքի աշխատակից էր: Ռուսական պաշտոնական տեղեկագրի համաձայն՝ հակառակորդը կենտրոնացրել էր 70 հազար զինվոր և սպա: Տե՛ս **Корсун Н. Г.**, նշվ. աշխ., էջ 105: **Мартirosян Д. Г.**, Российско-турецкий фронт Первой мировой войны. Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук, Саратов, 2006, էջ 96

/http://dilib.rsl.ru/load.php?path=/rsl01002000000/rsl010 0294 (մուտք՝ 19.06.2017): Իրականում հակառակորդի թվաքանակի մասին Տ. Ղևոյանը մեծ տեղեկություն չի ներկայացրել (տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 2, գ. 11, թ. 177): Օսմանյան հրամանատարությունը չէր կարող ռուս-թուրքական ճակատ ուղարկել այդքան բազմամարդ զորք: Այդ շրջանում օսմանյան զորքերը ծանր մարտեր էին մղում Հավիալիի շրջանում փորձելով պաշտպանել Կոստանդուպոլիսը բրիտանա-ֆրանսիական ուժերի գրոհից: Կարելի է վստահաբար ասել, որ Վանի հուլիսյան նահանգը ոչ մի ռազմական հիմնավորում չունեի: Ղա առաջ բերեց նաև Կովկասի փոխարքա Ի. Ի. Կորոնցով-Ղաշկովի զայրույթը: Նահանգի հրամանը տրվել էր Կովկասյան 4-րդ բանակային կորպուսի հրամանատար, գեներալ Պ. Ի. Օզանովսկու կողմից:

մոտ 12 դիվիզիա: Իմ կարծիքով՝ այդ թվաքանակը խիստ չափազանցված էր, քանի որ այդպիսի ուժեր թուրքերը չէին կարող հավաքել՝ չմերկացնելով Սարիղամիշյան գլխավոր ճակատը, և եթե դա այդպես էր, ապա Սարիղամիշի ճակատում չէր կարող աննկատ մնալ թուրքերի կողմից ճակատի նման թուլացումը: Հավանական է, որ կենտրոնացվել էր երեք, իսկ ամենաշատը՝ չորս դիվիզիա: Եթե թուրքերն ունենային 12 դիվիզիա, ապա նրանք չէին սահմանափակվի միայն Կոփի ջոկատը հետապնդելով. հավանաբար զգալի ուժերով կհետապնդեին և իմ ու գեներալ Տրուֆինի նահանջող ջոկատներին:

Հուլիսի 16-ին Կոփի ողջ ջոկատի կազմում էին Կովկ. 6-րդ հրաձգ. գունդը, 66-րդ հետև. դիվիզիայի Գրոզնու գնդի 4 գումարտակները, պլաստունյան 23-րդ հետևակային գումարտակը, դոնեցիների 1 հետևակային գումարտակը, 6 լեռնային թնդանոթները և կազակ. գունդը: Նա [Կոփի ջոկատը] դիրքավորվել էր Լիզի ու Կարաբաշար Չեռնոմորսկյան գյուղի միջև և հակառակորդի ճնշումից հետո ստիպված էր նահանջել գ. Կարաբաշար (Խարաբա-Շախիբ): Թուրքերը հարձակվում էին ողջ ճակատով՝ ձգտելով շրջառել թևերը: Ձախակողմյան ջոկատը դիրքավորվել էր այնպես, որ արգելի [հակառակորդի] մուտքը Խաչիկ-գյուղից դեպի հարթավայր: Ջոկատն այդտեղ մնաց մինչև հուլիսի 11-ի գիշերը: Թուրքերի ուժերն անընդհատ ավելանում էին, հեռավորությունը աստիճանաբար կրճատվում էր և որոշ տեղերում հասնում էր 300-500 քայլի, ուստի վտանգ կար, որ թուրքերը կարող են շրջանցել մեր ջոկատը և կտրել [շրջապատել] այն: Հաշվի առնելով նման իրավիճակը՝ հրամայվեց շարունակել նահանջը:

Հուլիսի 11-ի գիշերը ջոկատը նահանջեց Կոփից հարավ-արևելք գտնվող բարձունքները, որոնք բնական արգելք էին Մանազկերտի հարթավայր մտնելու համար: Մեր ջոկատի աջ թևը զբաղեցնում էին գրոզնենցիները: Հուլիսի 11-ին՝ ցերեկը մոտավորապես ժամը 12-ին, թուրքերը երևացին Կոփյան դարպասներում (այդպես էինք անվանում Բեյլան-ջիկ-դաղ լեռնաշղթայից և Կոփից հարավ գտնվող բարձունքների միջև ընկած լեռնանցքը)՝ մեր աջ թևի դիմաց, և անցան եռանդուն հարձակման՝ ձգտելով շրջառելու մեր աջ թևը: Երբ թուրքերը մոտ մեկ վերստ մոտեցան մեր աջ թևին, գրոզնենցիները ինքնագլուխ լքեցին դիրքերը և սկսեցին անկանոն նահանջել դեպի Թոնդուրեկ գյուղը: Նրանք չկատարեցին ջոկատի հրամանատար, գնդապետ Տրեդենսկու ուղարկած հրամանը՝ կանգնել ու դիրքեր գրավել: Այդպես մեր աջ թևը մերկացավ, և թուրքերը կարող էին անարգել շրջանցել մեզ ու դուրս գալ մեր թիկունք: Ջոկատի մյուս զորամասերին ոչինչ չէր մնում անել, քան նահանջել: Քանի որ թուրքերը մեզանից բավականին հեռու էին, ու մեզ բաժանում էր բարձունքների խումբը, ջոկատը վերակազմավորվեց երթային զորասյուների ու սկսեց կանոնավոր նահանջել դեպի Մանազկերտ քաղաքը: Քանի դեռ թուրքերը գրավում էին մեր կողմից լքված բարձունքները, որը նրանք կատարում էին բավականին

---

Պարզ չէ, թե ինչ հետախուզական տվյալների հիման վրա էր տրվել այդ հրամանը: Այն, որ այդ շրջանում թուրքերը չունեին այդքան մեծաթիվ զորքեր, վկայում է նաև այն փաստը, որ Վան մոտավոր հակառակորդի ընդամենը 400 հոգանոց ջոկատ: Նրանց կողմից սպանվեցին Վանում մնացած ծերունիները, հիվանդները, և հրդեհվեցին մի շարք տներ: Օգոստոսի 1-ին Վանը նորից գրավվեց ռուսական զորքերի կողմից: Ավելի մանրամասն տե՛ս **Հարությունյան Ա. Հ.**, Վան-Վասպուրականի ազգաբնակչության 1915 թ. հուլիսյան գաղթը, ՀՀ ԳԱԱ «Լրաբեր» հաս. գիտ., 2002, N 2, էջ 46-58, **Սահակյան Ռ.**, Արևմտյան Հայաստանի ռազմաքաղաքական և վարչատնտեսական իրավիճակը (1914 թ. հուլիս - 1917 թ. փետրվար), Եր., 2015, էջ 86-88: **Վիդալյան Վ. Հ.**, Տիգրան Դևոյանցի հետախուզական գործունեությունը, Եր., 2018, էջ 29-97: Գրքի գրախոսությունը տե՛ս **Ռուբեն Սահակյան**, «Պատմա-բանասիրական հանդես», 2019, N 1, էջ 245-248:

զգուշորեն, ջոկատը հնարավորություն ստացավ զգալիորեն հեռանալու: Մեր հետևից արձակված մի քանի հրետանային արկեր տեղ չհասան:

Հուլիսի 12-ի վաղ առավոտյան ջոկատը մոտեցավ քաղ. Մանազկերտին, սակայն դեռ չէր հասցրել դիրքավորվել, երբ թուրքերը նրա վրա հրետանային կրակ բացեցին: Կրակը գլխավորապես կենտրոնացված էր մեր ձախ թևի վրա: Բարեբախտաբար, շրապնետների մեծ մասը շատ բարձր էր պայթում, ուստի կորուստները ջոկատում քիչ էին: Հրետանակոծության ժամանակ խզվեց ջոկատի կապը Կոփի ջոկատի պետ, 66-րդ հետև. բրիգադի հրամանատար, գեներալ-մայոր Ամասիյսկու հետ, ուստի զորամասերը դիրքավորվեցին ըստ իրենց հայեցողության:

Կովկ. 6-րդ հրաձգ. գունդը գտնվում էր ձախ թևում: Նրանից ձախ տեղակայված էր Չեռնոմորսկյան կազակային գունդը, որից աջ դիրքավորվել էին 66-րդ հետևակ. դիվիզիայի զորամասերը, պլաստունները և դոնյան հետևակ գումարտակները: Գեներալ Ամասիյսկուն բազմիցս ուղարկված հաղորդագրությունները նրան չէին հասնում: Գեներալ Ամասիյսկին իր բնավորությամբ շատ քաջ էր ու հաճախ իր բրիգադի մարդկանց քաջալերելու համար զորաշղթայում էր լինում, որի հետևանքով, իհարկե, ջոկատի ողջ ղեկավարությունը տուժում էր: Գեներալ Ամասիյսկու բացակայությունը ստիպեց Կովկ. 6-րդ հրաձգ. գնդի հրամանատար, գնդապետ Տրեդենսկուն գործել բացարձակապես ինքնուրույն:

Այդ նույն ժամանակ նկատվեց, որ թուրքերը սկսել են զգալի ուժեր՝ մոտ մեկ դիվիզիա, կենտրոնացնել մեր ձախ թևի դեմ ու ակնհայտորեն ցանկանում են շրջանցել այն ու կտրել նահանջի ճանապարհը: Չեռնոմորսկյան կազակ. գունդը, ճնշվելով թուրքերից, նահանջեց, որի հետևանքով ջոկատի աջ թևը բացարձակապես բաց մնաց: Ողջ պահեստազորն օգտագործվել էր ձախ թևը երկարացնելու համար, սակայն մնում էր երկու վերստ մինչև Եփրատ գետը Մանազկերտի հարթավայրից բաժանող լեռան գագաթը: Այդ լեռան՝ թուրքերի կողմից գրավվելուց հետո ջոկատը կմնար կտրված: Գիշերը թուրքերն ընդհուպ մոտեցան մեր ձախ թևին: Գիշերը՝ մոտ ժամը 12-ին, նրանք գրոհեցին մեր ձախ թևը, որը զբաղեցնում էր Կովկ. 6-րդ հրաձգ. գնդի 5-րդ վաշտը: Վաշտը խուճապի մատնվեց և անկանոն նահանջեց, սակայն նրա հետևում պահեստազորում գտնվող պորուչիկ Ակիմովը հենց լսեց կրակոցները, ոչ միայն հակազրոհեց, այլև կանգնեցրեց 5-րդ վաշտին՝ կարգուկանոն հաստատելով ու թուրքերին ետ մղելով:

Լուսաբացից առաջ 6-րդ հրաձգ. գունդ եկավ Կոփի ջոկատի պետ, գեներալ Ամասիյսկին և հրամայեց նահանջել դեպի հյուսիս՝ Սանջան գյուղի մոտ: Կովկ. 6-րդ հրաձգ. գունդը զորայուն կազմեց և սկսեց նահանջել: Մոտենալով Մոլլա-Բաքի գյուղին՝ գունդը հանդիպեց դրոշակով գրոզենեցիներին, որոնք նահանջել էին Կովկ. 6-րդ հրաձգ. գնդից աջ: Սկսում էր լուսանալ: Զգացվում էր, որ թուրքերը մոտիկ են, անորոշ աղմուկ էր լսվում: Ամեն վայրկյան սպասում էին, որ կրակ կբացվի: Հանկարծ հնչեցին մի քանի հրացանային կրակոցներ, իսկ դրանց ետևից սկսեցին ճարճատել գնդացիները: Կովկ. 6-րդ հրաձգ. գնդից աջ գնացող գրոզենեցիների գումարտակը սկսեց փախչել Կովկ. 6-րդ հրաձգ. գնդի շարքերով և ճզմեց 1-ին և 2-րդ գումարտակների մի քանի վաշտեր, սակայն ճզմված վաշտերում շուտով կարգուկանոնը վերականգնվեց, և 1-ին գումարտակը զորաշղթա կազմեց ու կրակ

բացեց, որը կանգնեցրեց թուրքերի հարձակումը: 1-ին գումարտակի պաշտպանությամբ բոլոր զորամասերը գետանցեցին բավականին վարար, սակայն ոչ խոր Բանջան-դարասի գետը, անցան Մանազկերտի դաշտավայրը Եփրատից բաժանող լեռնաշղթան և իջան Եփրատի հովիտը:

Կովկ. 6-րդ հրաձգ. գնդի 1-ին գումարտակը հայտնվեց ծանր դրության մեջ: Նահանջի [ապահովման] համար այն ստիպված էր զոհաբերել շտաբ-կապիտան Սպիրիդիսի հրամանատարության տակ գտնվող 3-րդ վաշտը, որը թողնվեց գումարտակի նահանջը ապահովելու համար: Վաշտը կատարեց իր վրա դրված առաջադրանքը և հնարավորություն տվեց գումարտակին հեռանալու, սակայն շրջապատվեց թուրքերի կողմից և վաշտի հրամանատար շտաբ-կապիտան Սպիրիդիսի հետ գրեթե ամբողջությամբ գերվեց: Այս նահանջի ժամանակ մեր կորուստները չնայած զգալի էին, սակայն այնքան էլ մեծ չէին, ինչպիսին կարող էին լինել, եթե թուրքերն ավելի եռանդուն գործեին: Մարտի սկզբին վիրավորվեց գումարտակի հրամանատար, փոխգնդապետ Ծերեթեյիս: Կորուստները՝ զոհվածներով, վիրավորներով և գերեվարվածներով մինչև 250 շարքային և 2 թնդանոթ:

Կարճատև հանգստից հետո, որը հնարավորություն տվեց հետ մնացած զինվորներին հասնելու, ջոկատը նահանջեց դեպի Սանջան գյուղը, որտեղ հուլիսի 13-ի երեկոյան գրավեց բավականին ուժեղ դիրք, որտեղ ջոկատը մնաց մինչև հուլիսի 17-ը, քանի դեռ թուրքերը չէին սկսել սպառնալ մեր աջ թևի շրջանցմամբ:

Թուրքերը սկսեցին իրենց ուժերը կենտրոնացնել Տափըլ (Դութաղ) գյուղի ետևում, որտեղ, գետանցելով Եփրատը, կարող էին դուրս գալ ջոկատի թիկունքը և կտրել նահանջի ճանապարհը: Նման հնարավորությունը հաշվի առնելով՝ հրամայվեց հուլիսի 17-ի լույս 18-ի գիշերը նահանջել Պալանտեկեն գյուղի ետևում գտնվող բարձունքները, որտեղ գեներալ-լեյտենանտ Աբացիևի<sup>47</sup> շտաբի կողմից ընտրվել էին դիրքեր, որի հետ Կոփի ջոկատը կապ էր հաստատել, երբ բանակել էր Սանջան գյուղի մոտ: Սակայն այդ դիրքում նախատեսված չէր երկար մնալ. նահանջը պետք է շարունակվեր մինչև Ղարաքիլիսա (Ալաշկերտի)՝ մինչև մեր սահմանը, քանի որ Ալաշկերտի հովտում դժվար էր դիմակայել:

Հուլիսի 17-ի երեկոյան Պալանտեկեն գյուղի բարձունքներն ուղարկվեց Կովկ. 6-րդ հրաձգ. գնդի 3-րդ գումարտակը՝ կապիտան Պլատոնովի հրամանատարությամբ, որի պաշտպանության տակ զորամասերը պետք է նահանջեին Ղարաքիլիսա քաղաքը: Հուլիսի 18-ի առավոտյան հագիվ էր նահանջող զորայան վերջապահին անցել գումարտակի կողմից գրավված դիրքերը, երբ թուրքերը երեք կողմից, այդ թվում Եփրատի աջ թևից, կրակ բացեցին Կովկ. 6-րդ հրաձգ. գնդի 3-րդ գումարտակի՝ Պալանտեկենի դիրքերի վրա: Վերջինս<sup>48</sup> նպատակ ուներ գումարտակը կտրելու քաղ. Ղարաքիլիսայից: Հրետականակրծությանը զուգահեռ՝ թուրքերը հարձակում ձեռնարկեցին ճակատի ու մեր թևերի վրա: Գումարտակի դրությունը դառնում էր օրհասական, և քանի որ թուրքերի ուժերը

47 Աբացիև Դմիտրի Կոնստանտինի (Աբադզիև Դզամբոլատ Կոնստանտինի, 1857-1936) հեծելազորի գեներալ (1919), ազգությամբ օս: Կովկասյան բանակային կորպուսի Երևանյան ջոկատի հրամանատար (02.04.1915), Կովկասյան 6-րդ բանակային կորպուսի հրամանատար (14.06.1916)

48 Եփրատի աջ ափից բացված հրետանակրծությունը:

հսկայական էին, ուստի դիրքերը մինչև երեկո պահելու համար ստիպված էին կռվի մեջ ներգրավել ողջ Կովկ. 6-րդ հրաձգ. գունդը:

Եփրատի աջ ափի բարձունքներում թուրքերի գրաված դիրքերը, չնայած տեղանքի ուժեղ կտրտվածությանը, հնարավորություն էին տալիս նրանց հրետակոծելու մեր թիկունքը, ջոկատի դիրքերը, չկար մի տեղամաս, որը չհրետակոծվեր հակառակորդի հրետանու կողմից:

Գիշերը թուրքերն ընդհուպ մոտեցան պաշտպանվող ջոկատի դիրքերին, աջ թևում մարտագիծը թուրքերից առնվազն 300 քայլի վրա էր, իսկ որոշ մասերում ավելի քիչ: Այդ դիրքերում այլևս հնարավոր չէր մնալ, բացի այդ՝ անհրաժեշտություն էլ չկար, քանի որ Կովի ողջ ջոկատը հետևում էր թողել քաղ. Ղարաքիլիսան, ուստի ջոկատին հրամայվեց հուլիսի 19-ի գիշերը նահանջել դեպի քաղ. Ղարաքիլիսա: Հավանաբար աջ թևում թուրքերը նկատեցին ջոկատի նահանջը և անցան հարձակման: Ջոկատը, սակայն, օգտվելով մթությանից, հասցրեց հեռանալ՝ դիրքերում թողնելով երեք ծանր վիրավոր սպաների ու մի քանի շարքայինների, որոնց չկարողացան տանել: Հուլիսի 19-ի ցերեկը ջոկատը կարողացավ հասնել Դերաբի գյուղի բարձունքներին և երեկոյան դիրքեր գրավեց: Սակայն մինչև հուլիսի 21-ը թուրքերը չհայտնվեցին Ալաշկերտի հովտում՝ ունենալով բոլոր հնարավորությունները հասնելու հյուսիսից հովիտը շրջապատող բարձունքները և հովտում վճռական հարված հասցնելու:

Հավանաբար ինչ-որ լուրջ պատճառ կար, որը ստիպեց դադարեցնել նահանջող ջոկատի հետապնդումը, որը նրանք այնքան եռանդազին կատարում էին մինչև այդ պահը: Պատճառը ջոկատն իմացավ միայն հուլիսի 22-ին, երբ իրեն հրամայվեց անցնել հարձակման: Պատճառն այն էր, որ այդ ժամանակ Մերկեմիր-Կլիչ Գյաղուկի շրջանում ընթանում էին մարտեր: Մեր ջոկատը գեներալ Բարաթովի<sup>49</sup> հրամանատարությամբ, որն առանձնացվել էր բանակի հրամանատար գեներալ Յուդենիչի կողմից, Սարիղամիշյան ճակատից հարձակվում էր թուրքերի ձախ թևի վրա՝ նպատակ ունենալով Դուբախ գյուղի մոտ անցնել նրանց թիկունքը: Գեներալ Բարաթովի ջոկատը կազմված էր Կովկասյան 4-րդ հեծելազորային դիվիզիայից՝ իր հրետանիով, և կազակային մեկ դիվիզիայից:

Հուլիսի 21-ին՝ առավոտյան ժամը 9 անց 20 ռուպեին, քաղ. Ղարաքիլիսայի շրջանում նկատվում են մեր վրա հարձակվող երեք զորասյուններ, որոնցից յուրաքանչյուրում կար հետևակային գունդ: Ջորասյուններն ընթանում էին մեկը մյուսին զուգահեռ՝ ուղղվելով մեր ջոկատի դիրքերից հյուսիս-արևելք: Գեր-Գուրակ գյուղի մոտ զորասյունն անհետացավ: Հավանաբար այդ ժամանակ թուրքերը հետախուզություն էին կատարում և հայտնվեցին մեր ջոկատից արևմուտք՝ Վիրաշակ գյուղի մոտ: Կեսօրին քաղ. Ղարաքիլիսայի կողմից թուրքերն անցան հարձակման, սակայն, մեզ մոտ մեկ վերստ մոտենալով և ձախ թևում հանդիպելով բավականին առաջացած Կովկ. 6-րդ հրաձգ. գնդի գումարտակին, նահանջեցին՝ բավարարվելով միայն մեր դիրքերի հրետանակոծությամբ: Հուլիսի 22-ի ցերեկը մեր ջոկատը նահանջեց Ջամի-գատ գյուղը և խրամատավորվեց, քանի որ [թուրքերը]

49 **Բարաթով (Բարաթաշվիլի) Նիկոլայ Նիկոլայի** (1856-1947)՝ հեծելազորի գեներալ (1916), Կովկասյան 1-ին հեծելազորային դիվիզիայի (1914-1916), Պարսկաստանում առանձին ռազմարշավային կորպուսի հրամանատար (1916-1918), «Սպիտակ շարժման» մասնակից, Փարիզում հրատարակվող «Русский инвалид» թերթի գլխավոր խմբագիր, 1931 թ. Կովկասյան բանակի սպաների միության նախագահ:

կարող էին շրջանցել մեր թևերը, սակայն այդ նույն օրը՝ երեկոյան, հրաման ստացվեց անցնելու հարձակման:

Հուլիսի 23-ի երեկոյան մենք արդեն քաղ. Ղարաքիլիսայի մոտ էինք՝ ոչ մի տեղ չհանդիպելով հակառակորդին: Թուրքերը հապշտապ նահանջում էին: Հետախուզությունը պարզեց, որ նրանք գետանցել են Եփրատը և ուժեղ դիրքեր են գրավել նրա ձախ ափին: Հուլիսի 24-ի առավոտյան մենք պետք է գրոհեինք թուրքերի վրա: Առավոտյան ժամը 10-ին ճշգրիտ որոշվեց թուրքերի [դիրքերի] դասավորությունը: Նրանք զբաղեցնում էին Եփրատի հետևի բարձունքները՝ իրենց ճակատի առջև ունենալով ծանծաղուտ չունեցող գետը, որի առջևում հարթ դաշտ էր, որտեղ չէր կարող թաքնվել նույնիսկ առանձին հրածիգը: Նման դիրք ունեցող թուրքերին ճակատից գրոհելը վտանգավոր էր, անհրաժեշտ էր շրջանցել թևերը: Վստահ լինելով իրենց անվտանգության մեջ՝ թուրքերը թույլ տվեցին մեզ մոտենալ 1000 քայլ՝ չարձակելով ո՛չ հրացանային, ո՛չ էլ գնդացրային կրակ, միայն շրապնելային կրակ բացեցին: Սակայն, հավանաբար, նրանք հաշվի չառան շրապնելի թույլ լինելը մեծ բարձրության վրա: Չնայած իդեալական նշանառությանը՝ մեր շրթաններն ամբողջությամբ ծածկվեցին շրապնելային գնդակներով<sup>50</sup>, որոնցից, սակայն, միայն մի քանիսը մակերեսային վերքեր առաջացրին՝ հրաձիգներին շարքից չհանելով:

1000 քայլից հետո թուրքերն ուժեղ գնդացրային կրակ բացեցին, որը ստիպեց մեզ կանգ առնել ու հետագա հարձակումը կատարել առանձին հրաձիգների սողալով: Մեր կորուստները վաշտերում միանգամից զգալի դարձան, հատկապես՝ Կովկ. 6-րդ հրաձգ. գնդի 2 վաշտերում, որտեղ շարքից դուրս եկավ զինվորների մինչև 25 %-ը:

Միայն երեկոյան մենք կարողացանք մոտենալ Եփրատին՝ հուսալով, որ մթության մեջ մի կերպ կկատարենք գետանցումը: Մթնշաղին, մեզ համար անսպասելի, թուրքերը լքեցին դիրքերը և նահանջեցին Պալանտեկեն գյուղից հյուսիս: Մութ գիշերվա պատճառով նրանց հնարավոր չէր հետապնդել, ուստի մեր զորամասերը մնացին իրենց դիրքերում մինչև առավոտը:

Հուլիսի 25-ին ջոկատը կենտրոնացավ Խամո գյուղի մոտ, և հրամայվեց հուլիսի 26-ի առավոտյան գրոհել Պալանտեկենի բարձունքները: Առաջին գծում նշանակվեցին դոնյան հետևակային գումարտակները, մոտակա պահեստազորում՝ Կովկ. 6-րդ հրաձգ. գնդի երկու գումարտակ, իսկ հեռավոր պահեստազորում՝ ջոկատի պետ, գեներալ Աբացիկի տրամադրության տակ՝ Կովկ. 6-րդ գնդի 1 գումարտակ, 66-րդ դիվիզիայի Գրոզնիի հետևակային գունդը, Կուբանյան 3-րդ բրիգադի պլաստունների 2 գումարտակ և Չեռնոմորսկյան կազակային գունդը: Ջոկատի առջև գտնվում էին զառիվեր մատուցներով բարձունքներ: Թուրքական խրամատների գիծը, ինչպես արծվի բույն, կախված էր ջոկատի վրա: Թվում էր, թե հնարավորություն չկա հակառակորդին դուրս մղելու այդպիսի դիրքերից: Թուրքերից չէին կարող աննկատ մնալ ոչ միայն մեր հատվածական տեղաշարժերը, այլև նույնիսկ առանձին հրաձիգները:

Ստիպված էինք հարձակվել լեռան զառիթափով ուժեղ հրետանային, գնդացրային ու հրացանային կրակի տակ: Մեր հրետանին սկսեց կրակել շրապնելով, սակայն շուտով

<sup>50</sup> Շրապնելային արկը տարբերվում է մյուս արկերից նրանով, որ այն օգտագործվում է բացառապես հետևակի և հեծելազորի դեմ: Կրակելուց առաջ հրետանավորը հատուկ քուղով, որը օդում պայթեցնում է լիցքը, սահմանում է, թե ինչ բարձրության վրա պետք է արկը պայթի, և կոտորակը կամ բեկորը խցի հակառակորդին:

պարզվեց, որ այդ կրակն անօգուտ է, քանի որ ստիպված էինք կրակել ներքևից վերև, և շրապնեյի պայթյունը չէր վնասում հակառակորդին՝ չնայած կրակի դիպուկությանը: Անցանք նոնակաների<sup>51</sup>: Առաջին իսկ արկն ընկավ թուրքերի խրամատը, և տեսանելի էր, թե ինչպես թուրք հրաձիգները դուրս թռան այնտեղից: Հետագա արկերն այնքան էլ հաջող չէին դիպչում: Բարեբախտաբար, այս անգամ հակառակորդի հրետանին այժի չէր ընկնում դիպուկությամբ, քանի որ մեր մարտկոցը լավ էր քողարկվել լեռան ծալքերում:

Դոնեցիները հրաժարվեցին հարձակվելուց և հարձակման սկզբում նրանց շղթան մնաց տեղում որևէ քայլ առաջ չկատարելով: Դոնեցիների շղթային մոտեցան Կովկ. 6-րդ հրաձգ. գնդի գումարտակները՝ 2-րդ գումարտակի հրամանատար, կապիտան Պլատոնովի ընդհանուր հրամանատարությամբ: Բազմիցս կապիտան Պլատոնովի կողմից կրկնված հրամանն առաջ շարժվել, դոնեցիները չկատարեցին ու շարունակում էին պառկած մնալ: Հաշվի առնելով այն, որ եթե նման ստորաբաժանում ի վերջո հնարավոր լինի գրոհի տանել, այն միայն կբարոյալքի հրաձիգներին, կապիտան Պլատոնովը դոնեցիներին հրամայեց մնալ պահեստազորում, իսկ ինքը հարձակման գնաց իր հրամանատարության տակ եղած Կովկ. 6-րդ հրաձգ. գնդի երկու գումարտակներով: Առանց կրակոցի, հաստատապես, ասես մարտավարական պարապմունքի ժամանակ, շղթան շղթայի հետևից հրաձիգները սկսեցին բարձրանալ լեռան գաղիթափ ծալքերով: Կանգառ կատարվում էր միայն մեռյալ տարածքում<sup>52</sup> կարճատև դադարի համար: Միայն 300 քայլ հեռավորության վրա կանգնեցին և հատվածական կրակ բացեցին, և քանի որ լեռան ավելի հեռավոր լանջը խոցելի էր միայն թուրքական խրամատներից, թուրքական խրամատների առջևի մեռյալ տարածքը անցնելով պետք էր գրոհել:

Երբ մեր հրաձիգների շղթան գտնվում էր թուրքական խրամատներից դեռևս 800 քայլ հեռավորության վրա, մեր արկերից վառվեց թուրքական դիրքերն առատորեն ծածկող չոր խոտը: Խոտը մարդու միջին հասակին էր: Կրակը և ծուխը, որոնք ուժգնանում էին քամու պատճառով, խրամատներից ուղղվում էին դեպի թուրքական պահեստազորը: Երևում էր, որ այնտեղ խառնաշփոթ էր սկսվել: Օգտվելով դրանից՝ կապիտան Պլատոնովը հրամայեց 7-րդ վաշտին արագ իջնել լեռնագոգ, դուրս գալ թուրքերի թևը և հրաձիգների հետ միաժամանակ գրոհել: Բավականաչափ գնդակոծելով թուրքերին և նկատելով, որ թուրքերի կրակը զգալիորեն թուլացել է, կապիտան Պլատոնովը, օգտվելով թուրքերի խրամատների առջև գտնվող մեռյալ տարածքից, կենտրոնացնելով երկու գումարտակներն էլ, հրամայեց անցնել հարձակման:

Անհրաժեշտ է նշել, որ դոնեցիները չհետևեցին հրաձիգներին ու շարունակեցին մնալ տեղում, ինչի հետևանքով կապիտան Պլատոնովը չունեի պահեստազոր, և անհաջողության դեպքում իրադրությունը կարող էր վտանգավոր լինել: Հարձակվողների գլխավոր ուժերը հեռու էին: Սակայն այլ ելք չկար, պետք էր ռիսկի դիմել և գնալ գրոհի: Հրաձիգներն արագ բարձրացան լեռը և նետվեցին թուրքերի խրամատները: Մեր հրետանին շարունակում էր կրակել, և արկերն ընկնում էին հրաձիգներից մի քանի քայլ առաջ: Հրաձիգները կանգնեցին ու սկսեցին գոռալ, որ դադարեցնեն հրետանակոծությունը: Բայց մեր հրետա-

51 Այդպես էին անվանում սովորական հրետամային բեկորային արկը:  
52 Գնդակոծությունից զերծ տարածքում:



նին ինքը այդ ժամանակ դադարեցրեց կրակը, և հրաձիգները «ուռա» գոռալով նետվեցին դեպի խրամատները: Այդ նույն ժամանակ 7-րդ վաշտը պորուչիկ ժուրույկի հրամանատարությամբ, օգտվելով հրդեհի կրակի և ծխի քողից, հովիտով բարձրացավ լեռը՝ թուրքերի աջ թևում գտնվող խրամատների ետևը, ու հայտնվեց թուրքերի գլխավոր պահեստազորի առջև՝ մի քանի քայլի վրա: Թուրքերի պահեստազորում կային երեք գումարտակ, և հենց լեռան ետևում տեղակայված էին երկու թնդանոթ: Պահեստազորի մի մասը զբաղված էր կրակը հանգցնելով, իսկ մյուսը պատրաստվում էր գնալու խրամատները՝ օգնության: Պորուչիկ ժուրույկին չչփոթվեց հակառակորդի թվական գերազանցությամբ և «ուռա» գոռալով հարձակվեց պահեստազորի թևի վրա: 7-րդ վաշտի անսպասելի հայտնվելը, որի հարձակումը թուրքերը չգիտես ինչու չէին նկատել, և խրամատներից փախչող թուրքերը խուճապ առաջացրին թուրքերի պահեստազորում, և նրանք փախուստի դիմեցին՝ թողնելով երկու թնդանոթ և դիրքի պարետ Ֆուադ բեյին իր շտաբի հետ: Սկսում էր մթնել, ուստի հնարավոր չէր թուրքերին հետապնդել: Մարդիկ շատ էին հոգնած, իսկ թարմ պահեստազոր չկար: Այնուամենայնիվ 6-րդ վաշտը նրանց մի քանի վերստ հետապնդեց և հետապնդումից զրավված դիրքը վերադարձավ միայն գիշերվա ժամը 12-ին:

Այդ օրը մեր ռազմավարն էր՝ գերվել էին 200-ից ավելի ասկյար, 4 սպա, գնդի հրամանատար Ֆուադ բեյը, 2 թնդանոթ արկերով, Անատոլիայի քարտեզ և գաղտնի գրագրություն: Ֆուադ բեյի ցուցմունքի համաձայն՝ թուրքերն ապահովում էին իրենց գլխավոր ուժերի նահանջը և հրաման ունեին կասեցնելու ռուսների հարձակումը, որքան հնարավոր է: Գերիների և անձամբ Ֆուադ բեյի ցուցմունքների համաձայն՝ ջոկատը կազմված էր հետևակի 2 գնդերից և 4 թնդանոթներից: Ջոկատի հրամանատարը (դիրքի պարետը) գնդերից մեկի հրամանատար Ֆուադ բեյն էր: Ֆուադ բեյն ասում էր, որ ինքը հիանում էր հրաձիգների հարձակումով: Պալանտեկեն գյուղի բարձունքի գրավման համար կապիտան Պլատոնովը պարզևատրվեց Ս. Գեորգիի 4-րդ աստիճանի շքանշանով: Ջոկատի հետագա առաջխաղացումը շարունակվեց մինչև հուլիսի 29-ը ներառյալ: Մեր ջոկատը հասավ մինչև Բերդան գյուղը, որտեղ կանգ առավ մինչև օգոստոսի 15-ը ռազմաճակատի ընդհանուր դրության առնչությամբ:

Այսպիսով հուլիսի 10-ից մինչև 26-ը թուրքերի ժամանակավոր հաջողությունը Կոփ-Մանազկերտ ուղղությամբ վերացվեց թուրքերի համար ահռելի կորուստներով՝ շնորհիվ Կովկասյան բանակի հրամանատար, գեներալ Յուդենիչի կողմից իր ռազմավարական պահեստազորից ուղարկված գեներալ Բարաթովի հրամանատարությամբ խոշոր ջոկատի<sup>53</sup>:

Կովկ. 4-րդ բանակային կորպուսի շտաբի շփոթմունքն այնքան մեծ էր, որ թուրքական հարձակման ժամանակ շտաբը Ախտայի<sup>54</sup> լեռնանցքով անցավ մեր սահմանը և տեղակայվեց Կարսի մարզի Նովո-Նիկոլասկ գյուղում, իսկ թուրքերին ջարդելուց հետո տեղավորվեց Ն[երքին] Դերաբի գյուղում:

Հակառակորդը դուրս շարտվեց Խորոսանից մինչև Մերկամիրի լեռնանցքը, Չակմակ դագի շրջանը և Բուլթումի, Բայրակ դար, Քեֆրի, Սինաին կուլի գյուղերը, Գամի Կուպակ,

53 Հակառակորդին ջայնջախելու նպատակով գեներալ Ն. Յուդենիչի հրամանով առանձնացվել էր գեներալ Ն. Բարաթովի հրամանատարությամբ 20 գումարտակ, 36 հարյուրյակ և 36 թնդանոթ: St' u Maslovenskiy E. B., նշվ. աշխ., էջ 178:

54 **Աղտոճոր, Ձորահովիտ** լեռնանցք Հայկական պարի կենտրոնական հատվածում, Կողբից հարավ-արևմուտք:

Նազի Կալենդոր, Շիրոնին Կոնի, Խամգա, Շեյխ Կարա, Ապիլ, Թորգոթ, Հալիս Թոփա-սի լեռը, Կոփ և մինչև Ախլաթ լեռան գիծը: Շեյխան գյուղից մինչև Եփրատի աջ ափի տեղամասը զբաղեցնում էր 66-րդ հետև. դիվիզիան, իսկ Եփրատի ձախ ափից՝ գետերալ Աբացիկի ջրկատր, որից որպես առաջապահ Կովկ. 6-րդ հրաձգ. գնդի 2 գումարտակ ուղարկվեց Սանջանից հարավ: Առաջապահից առաջ Մանազկերտի ուղղությամբ ուղարկվեց հեծելազոր: Երբ գետերալ Շարպանտիեի հեծելազորային դիվիզիան եկավ այդ շրջան, նա՝ որպես կոչումով ավագ, ստանձնեց տեղամասի հրամանատարությունը:

Քանի դեռ Պալանտեկեն գյուղի և Միրկամիրի լեռնանցքի մոտ ընթանում էին մարտեր, [Խուլիսի] 25-ին իմ ջրկատր Կըզըլ-Դիզայից ուղղվեց դեպի Դիադին գյուղը առավոտյան ժամը 5-ին: Անցումը դժվար չէր, քանի որ համեմատաբար զով էր, բացի այդ՝ մարդիկ Կըզըլ-Դիզայում ունեցած օրահանգստի շնորհիվ փոքր-ինչ հանգստացել էին: Ճանապարհին ես ստուգեցի Սուրբ Հովհաննեսի հնագույն վանքը: Նա իր վիթխարիությամբ բոլորիս զարմացրեց: Իհարկե, մնացել էին ինչպես եկեղեցիների, այնպես էլ վանական խցերի միայն պատերն ու տանիքները:

Դիադին հասանք երեկոյան ժամը 5-ին: Առաջին անգամ ականատես եղանք զորահանգրվանի աշխատանքին և ընթերցիք նույնիսկ այթոռներին նստած 2 տեսակի համեղ ճաշով: Վաղուց նման հարմարավետությամբ չէինք կերել:

[Հուլիսի] 26-ին ջրկատն անցավ Թաշլի չայը, իսկ [Խուլիսի] 27-ին՝ Աղա-Դևե գյուղը: Վերջին օրագնացը բավականին ծանր էր, ավելի քան 30 վերստ: Ճանապարհին հանդիպում էին բնակիչներով գյուղեր: Դրանք եզդիներ էին: Հատկապես ծանր էր այն զորամասերի համար, որոնք ստիպված էին առաջանալ պահակային պահպանությունից: Ստիպված էի Աղա-Դևեում՝ անծանոթ տարածքում, որտեղ խոտը գրեթե մարդու հասակին էր հասնում, նշանակել պահակակետ: Իհարկե, վտանգավոր առանձնապես ոչինչ չկար, քանի որ մոտակայքում ընդհանրապես թուրքեր չկային:

Հարձակում կարելի էր սպասել միայն քրդական ավազակախմբերի կողմից: Աղա-Դևեում ջրկատը մնաց երկու օր: Այդ կանգառի պատճառն ինձ հայտնի չէր: Հիվանդների թիվը հետևակային ստորաբաժանումում գնալով աճում էր: Ամենից շատը փորացավով հիվանդներն էին: Մարդիկ այդ երկու օրվա ընթացքում փոքր-ինչ հանգստացան, լվացին սպիտակեղենը, վերանորոգեցին հագուստն ու կոշիկները, որքան կարողացան: Մարդիկ լի էին մակաբույծներով: Մի՞թե կատակ է, նրանք հունիս ամսից սկսած չէին լողացել:

[Հուլիսի] 30-ին ջրկատը հրամանի համաձայն անցավ Խամո գյուղը: Այնտեղ էր տեղակայված բրիգադային լազարեթը: Ստուգեցի լազարեթը լցված: Այն լցված էր հիվանդներով ու վիրավորներով: Մենք էլ նրանց հանձնեցինք զգալի թվով հիվանդներ: Լազարեթը ստիպված էր նրանց [հիվանդների] մեծ մասին ուղարկել Երևան:

[Հուլիսի] 31-ին ջրկատն անցավ Սանջան: Ճանապարհին՝ Սանջակից մի քանի վերստի վրա, գտնվում էր Սանջանյան ջրկատի պետ, գետերալ Շարպանտիեի շտաբը: Ներկայացա նրան, քանի որ իմ ջրկատը մտել էր նրա ջրկատի կազմի մեջ: Նա ինձ և շտաբի պետին հրավիրեց ճաշի: Ջրկատը կարճատև հանգստից հետո ուղևորվեց Սանջան: Ցանկացա գետերալ Շարպանտիեից իմանալ Կոփի մարտերի մանրամասները, սակայն պարզվեց, որ նա նույնպես ոչինչ չգիտեր:

Հասնելով Սանջան՝ ես ներկայացա Կովկասյան 2-րդ կազ. դիվիզիայի պետ, գեներալ Աբացիևին: Նա ապրում էր գյուղի շինություններից մեկում: Սանջանում էր Կովկ. 2-րդ հրաձգ. գնդի մեկ գումարտակ: Հաջորդ օրը Կովկ. 7-րդ հրաձգ. գունդն ուղարկեցի հարավ որպես Սանջանյան ջոկատի աջ առաջապահ, իսկ ծախում տեղավորված էր 6-րդ հրաձգ. գունդը: Կովկ. 5-րդ հրաձգ. գունդը մեկ գումարտակի հետ մնաց տեղում որպես Սանջանյան ջոկատի պահեստազոր:

Պարենավորման հարցը սկսեց փոքր-ինչ կարգավորվել: Այնուամենայնիվ հացը չէր բավականացնում: Այն ողջ ընթացքում չէր բավականացնում: Համբարակությունը դեռևս չէր կարողանում այդ հարցը կարգավորել:

Մեր ժամանելու երկրորդ օրը ձեռնարկեցինք Սանջանյան դիրքերի ամրացման աշխատանքները կորպուսի ինժեների և սակրավորի հետ: Ես իմ շտաբի պետի և կորպուսի ինժեների հետ շրջեցի բոլոր դիրքերը և նախագծեցի այդ աշխատանքը, որը կատարում էին պահեստազորից ամեն օր ուղարկվող զորամասերը: Հանգստից հետո ձեռնամուխ եղանք նույնիսկ շարային պարապմունքների, քանի որ գրեթե 2-ամսյա անցումներից ու մարտերից հետո հրաձիգները բացարձակապես կորցրել էին զինվորական տեսքը: Հագուստ և կոշիկ համբարակությունը դեռևս չէր հասցրել բերել: Մարդիկ դրա պատճառով շատ էին տանջվում: Շատ հրաձիգների հագուստը (գիմնաստյորկան<sup>55</sup>) կտորի պատանիկներից էր բաղկացած, իսկ շատերի կոշիկներն առանց կոշկատակերի էին:

Ես շտաբի պետի հետ գնացի Կովկ. 6-րդ հրաձգ. գնդի ծախ առաջապահը: Ծանապարհին ընկած էին մեծ թվով թուրք զինվորների դիակներ: Զարմանալի էր այն, որ նրանցից գարշահոտություն չէր փչում: Մարդիկ պառկած էին ճիշտ քնածի նման: Դեմքերը, ձեռքերը, ոտքերը և հագուստը ձեռք տված չէին: Նույնիսկ վայրի գազանները նրանց չէին այլանդակել: Վերադառնալով ես ստուգեցի գունդը և նրա զբաղեցրած դիրքերը:

Շնորհակալություն հայտնեցի մարտական գործողությունների համար: Դիրքը լավն էր և ուժեղ ամրացված:

Գնդի առջևում՝ հարավում Մանագակերտի կողմում, տեղակայված էին Սանջանյան ջոկատի հեծյալ զորամասերը, որոնք հետախուզություն էին կատարում:

Կովկասյան 2-րդ հրաձգային բրիգադի երեք գնդերը (5-րդ, 6-րդ և 7-րդ) Սանջանի ջոկատում մնացին մինչև օգոստոսի 14-ը:

Սանջանյան դիրքերի ամրացման աշխատանքները միշտ ընթանում էին արագացված տեմպերով: Հակառակորդն այդ ընթացքում որևէ նախաձեռնություն չէր ցուցաբերում: Մեր կողմից [ուղարկվող] հեծելազորը և հետախույզները ողջ ընթացքում անհանգստացնում էին թուրքերին:

Ալաշկերտի հովիտ թուրքերի ներխուժման ժամանակ՝ հուլիսին, Ադրբեջանից<sup>56</sup> Կովկ. 4-րդ բանակ. կորպուսի հրամանատարի կողմից պահանջվեց տեղափոխել Կովկ. 8-րդ հրաձգ. գունդը և Կովկ. 7-րդ հրաձգ. գնդի 1 գումարտակ: Այդ 5 գումարտակներն առաջ շարժվեցին երկու շարասյուներով, մեկը 8-րդ գնդի հրամանատար, գնդապետ Չապլինսկու, իսկ մյուսը՝ 8-րդ գնդի ավագ շտաբ սպա, գնդապետ Սիլիկովի [Մովսես Սիլիկյան]

55 Զինվորական բլուզ:

56 Պարսկաստանի Ատրպատականից:

հրամանատարությամբ: Երկու զորամասերն ուղևորվեցին Ջուլֆա, որտեղից երկաթուղով դեպի Ալեքսանդրապոլ և Կարս, իսկ Կարսից երթային կարգով Կաղզվանով՝ դեպի Ալաշկերտի Ղարաքիլիսա:

Ֆոնա Իվանի Նազարբեկով [ստորագրություն]

ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 5, թ. 1-48: Բնագիր: Ձեռագիր:

**Ռուբեն Օ. Սահակյան** – գիտական հետաքրքրություններն են՝ Առաջին համաշխարհային պատերազմի ռուս-թուրքական ռազմաճակատը, կամավորական շարժումը, Հայոց ցեղասպանությունը, ինքնապաշտպանական մարտերը, հայ ոստիկանության պատմությունը:

## Summary

### THE UNPUBLISHED MEMORIES OF TOVMAS NAZARBEKYAN

Military operations on the Caucasus Front from July 1914 to April 26, 1916

Copy-book 4: from July 10, 1915 to August 14, 1915

Ruben O. Sahakyan

**Key words** - Mush, Manazkert, Andranik, Dro, N. Yudenich, Lake Van, Van, Archesh, Kop, P. Oganovsky, D. Abatsiev, N. Baratov, M. Silikyan.

In his 4th notebook of memoirs, General T. Nazarbekyan describes his military operations that took place from July 10 to August 14, 1915. The commander continues to describe the July retreat of 1915 from Kopa in the west and Van in the south. In his opinion, during the advancement of units of the 4th Army Corps the rear service could not ensure uninterrupted supply of the advancing units. In addition, there was no stable communication between the advancing units and therefore commanders of the unit were unable to coordinate their actions. At the same time mutually exclusive orders were given by the corps commander, General P. Oganovsky due to which operations to seize the cities of Mush and Bitlis (Bagesh) were failed.

In his memoirs T. Nazarbekyan calls the treacherous July departure from the city of Van of the Transbaikal (Trans-Baikal) Cossack Division under the command of General A. Nikolaev. According to T. Nazarbekyan, nothing threatened the city of Van. He also refutes the widespread belief that 11 unfriendly divisions attacked the part of the 4th Caucasian Army Corps. According to the general, about 4 Turkish

divisions advanced in the direction of Manazkert. Due to a thoughtless and justified retreat, more than 10 thousand Armenian refugees – children, women and the elderly died. Victims could be more if they were not protected by the Armenian volunteers and Russian military personnel.

Резюме

## НЕИЗДАННЫЕ ВОСПОМИНАНИЯ ТОВМАСА НАЗАРБЕКЯНА

Военные действия на Кавказском фронте с июля 1914 г. по 26 апреля 1916 г.  
Тетрадь 4: с 10 июля 1915 г. по 14 августа 1915 г.

Рубен О. Саакян

**Ключевые слова** - Муш, Маназкерт, Андраник, Дро, Н. Юденич, озеро Ван, Арчеш, Коп, П. Огановский, Д. Абадиев, Н. Баратов, М. Силикян.

В 4-й тетради своих воспоминаний генерал Т. Назарбекян описывает военные действия на Кавказском фронте, произошедшие с 10 июля по 14 августа 1915 г. Полководец продолжает описывать июльское отступление русской армии 1915 г. от Копана западе и Вана на юге. По его мнению, во время продвижения частей 4-го армейского корпуса тыловая служба не могла обеспечить бесперебойное снабжение наступающих частей. Кроме того, между наступающими подразделениями не была организована стабильная связь, и поэтому командиры отрядов не могли согласовать свои действия. Одновременно командиром корпуса, генералом П. Огановским, были даны взаимоисключающие приказы, из-за которых операции по захвату городов Муш и Битлис (Багеш) были провалены.

Т. Назарбекян в своих мемуарах называет предательским июльский отход Забайкальской казачьей дивизии под начальством генерала А. Николаева из города Ван. По убеждению Т. Назарбекяна, ничего не угрожало городу Ван. Он также опровергает распространенное мнение о том, что на части 4-го Кавказского армейского корпуса наступали 11 неприятельских дивизий. По мнению генерала, в направлении Маназкерта наступали около 4-х турецких дивизий. Из-за необоснованного отступления погибло более 10 тысяч армянских беженцев - детей, женщин и стариков. Жертв могло бы быть больше, если бы их не прикрывали армянские добровольцы и русские военнослужащие.

## REFERENCES

1. «Hambawaber», T'iflis, 1916, N 12, 13 marti (**In Armenian**).
2. **Andranik Ozanyan**. Dokumenti i materiali. Sostaviteli: Arutjunjan A. O. (rukovoditel'), Arutjunjan G. G., Evoyan V. S., Mirzojan S. S., Shatirjan G. M., «Vestnik arxivov Armenii» Jer., 1991, N 1-2 (**In Russian**).
3. **Arutjunjan A. O.**, Kavkazskij front 1914-1917 gg., Jer., 1971 (**In Russian**).
4. **Baxturina A. Ju.**, Okrainy rossijskoj imperii: Gosudarstvennoje upravlenije i nacional'naja politika v gody Pervoj mirovoj vojny (1914-1914 gg.), M., 2004 (**In Russian**).
5. **Gevorgyan H.**, Dro, Yer., YePH hrat., 2014 (**In Armenian**).
6. **Ghorghanean G.**, Hayeri masnakts'ut'iwně hamashkharhayin paterazmin, P'ariz, 1931 (**In Armenian**).
7. **HAA**, f. 1086, ts'. 4, g. 435, t'. 7 (**In Armenian**).
8. **HAA**, f. 1457, ts'. 2, g. 11, t'. 177 (**In Armenian**).
9. **HAA**, f. 1457, ts'. 2, g. 11, t'. 177 (**In Armenian**).
10. **Harutyunyan A. H.**, Van-Vasparakani azgabnakch'hut'yan 1915 t. hulisyan gagh'tě, HH GAA «Lraber hasarakakan gitut'yunneri», Yer., 2002, N 2 (**In Armenian**).
11. **Korganoff G.**, La Participation des Armeniens a la Guerre Mondiale sur le Front du Caucase (1914-1918), Paris, 1927.
12. **Korganov G. G.**, Uchastije armjan v mirovoj vojne na Kavkazskom fronte (1914-1918). Per. s fr. **Pirumjan Ju. L., Dolbakjan E. Je., Red. Dolbakjan E. Je., Melik-Shaxnazarov A. A.**, M., 2011 (**In Russian**).
13. **Korsun N. G.**, Alashkertskaja i Xamadanskaja operacii na Kavkazskom fronte mirovoj vojny v 1915 godu, M., 1940 (**In Russian**).
14. **Martirosjan D. G.**, Rossijsko-tureckij front Pervoj mirovoj vojny. Dissertacija na soiskanje uchjonoj stepeni kandidata istoricheskix nauk, Saratov, 2006  
[/http://dilib.rsl.ru/load.php?path=/rsl01002000000/rsl010 0294 \(mutk' 19.06.2017\) \(In Russian\).](http://dilib.rsl.ru/load.php?path=/rsl01002000000/rsl010 0294 (mutk' 19.06.2017) (In Russian).)
15. **Maslovskij Je. V.**, Mirovaja vojna na Kavkazskom fronte 1914-1917 g., Parizh, 1933 (**In Russian**).
16. **Melk'onyan A.**, Ushagrav ashkhatut'yun. Fyodor Eliseev, «Kazaknerě kovkasyan chakatum 1914-1917», «Banber Hayastani arkhivneri», 2004, N 1 (**In Armenian**).
17. Ruben Sahakyan, «Patmabanasirakan handes», Yer., 2019, N 1 (**In Armenian**).
18. **Sahakyan R.**, Arevmtyan Hayastani řazmak'aghak'akan yev varch'atntesakan iravichakě (1914 t'. hulis - 1917 t'. p'etrvar), Yer., 2015 (**In Armenian**).
19. **Simonyan H. R.**, Andraniki zhamanakě, yerku grk'ov, girk' A, Yer., 1996 (**In Armenian**).
20. **Vasilev A. P.**, Zabajkalskije kazaki, Chita, 1916-1918 gg. (**In Russian**).
21. **Virabyan V. H.**, Tigran Devoyants'i hetakhuzakan gortsuneut'yuně, Yer., 2018 (**In Armenian**).
22. **Zaleskij K. A.**, Pervaja mirovaja vojna. Biograficheskij slovar', M., 2000 (**In Russian**).
23. Zōravar Andraniki kovkasean chakati patmakan ōragrut'iwně 1914-1917: Oraguats zōravarin t'iknapah zinuorēn, Yer., 2000 (**In Armenian**).

# ՀԱՎԵԼՎԱԾ

## ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ\*

**«ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ  
1919 Թ. ՄԱՅԻՍԻ 28-Ի ԱԿՏԸ.  
պատմություն և արդիականություն»,  
Երևան, 24-ը մայիսի, 2019 թ.**

---

\* Կարեն Պ. Հայրապետյանի «Հատվածականության հաղթահարման ՀՀ իշխանությունների քաղաքականությունը (1918 - 1919 թթ.)» ընդարձակ զեկույցի տպագրությամբ ավարտվում է գիտաժողովի նյութերի հրապարակումը: